

Ա.Ա. Ասատրյան

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ցարական Ռուսաստանում ճնշված ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին ազգային ու սոցիալական ազատագրական պայքարը ուսական առաջին ռևոլյուցիայի պատմության կարևորագույն էջերից է:

Ցարական կայսրության մյուս ժողովուրդներին և իր անմիջական հարևան անդրկովկասյան ժողովուրդներին հետ միասին՝ հայ ժողովուրդին էլ ցարիզմի դեմ մղված համառուսական ազատագրական պայքարի մարտական մասնակիցն էր: Այդ իրողությունամբ էլ պայմանավորվում է և այն, որ ռևոլյուցիայի կարճատև, բայց իր բովանդակությամբ աննախընթաց հարուստ եռամյա ժամանակաշրջանը (1905—1907 թթ.) հիմնովին նոր ու կարևորագույն էտապ է հայ գրականության զարգացման պատմության մեջ: Ընդհանուր առմամբ 1905—1907 թթ. հայ գրականությունը (ներառյալ և ժուռնալիստիկան) տվյալ էպոխայի հասարակական-քաղաքական կյանքի հարուստ տարեգրություն է, որն անդրադարձնում է հայ աշխատավոր ժողովրդի ակտիվ մասնակցությունը ռուսական ռևոլյուցիային, ըստ որում անդրադարձնում է նաև ժողովուրդների բարեկամության ամրապնդումը իրական-պատմական ընթացքի մեջ, իբրև ցարիզմի դեմ ժողովուրդների մղած համատեղ ազատագրական պայքար՝ ուս մեծ ժողովրդի, Ռուսաստանի պրոլետարիատի գլխավորությամբ:

2. Մինչև ռևոլյուցիան՝ հայ նոր գրականության հիմնադրի անմահ վիպերգության՝ «Վերք Հայաստանի»-ի ստեղծման ժամանակներից սկսած՝ Ռուսաստանում և Անդրկովկասում հետզհետե ուժեղացող ռեակցիոն քաղաքականության հետևանքով՝ ցարիզմի նկատմամբ ատելության ու ցասման լեռներ էին կուտակվել հայ ժողովրդի և նրա ազատագրության իղձերը մարմնավորող գրողների սրտում: Արվյանի անհայտ ու անդաժ կորստից, մեծ Նալբանդյանի անժամանակ ողբերգական մահվանից հետո անցած տասնամյակներում ավելի ու ավելի էր բորբոքվել այդ հրաշունչ ատելությունը, իբրև արտահայտություն հայ ժողովրդի ազգային ու սոցիալական վարքի, որն ավելի էր խորացել՝ մանավանդ գոլիցինյան սատրապության ժամանակաշրջանում:

Ահա թե ինչու ռևոլյուցիայի առաջադրած հիմնական ու կենտրոնական խնդիրը՝ ցարիզմի տապալումը, Ռուսաստանի ազատագրումը ռազմաֆեոդալական բռնակալությունից՝ ի թիվս այլ ազգերի, լիովին արտահայտում էր նաև հայ ժողովրդի կենսական շահերը թե՛ արևելյան Հայաստանում և թե՛ արևմտյան: Եվ ահա թե ինչու բոլոր հայ առաջագեմ գրողները, հայ պրոգրեսիվ պարբերական մամուլի օրգանները պետք է գրականարար արձագանքեին ռևոլյուցիային և ամենից ավելի նրա հիմնական խնդրին՝ ցարիզմի դեմ մղվող ազատագրական պայքարին:

Առանձնապես ուշագրավ ու կարևորագույն փաստ է, որ ողջակալ ռեուլյուցիային ակտիվորեն և ուժգնորեն արձագանքեցին նաև հայ կուլ-
տուրայի ու գրականության՝ Անդրկովկասից և Ռուսաստանից շատ հեռու
գտնվող մյուս բոլոր մեծ ու փոքր օջախներն էլ՝ Արևմտյան Հայաստանում
ու Թյուրքիայում, Եգիպտոսում, Արևմտա-եմրոպական երկրներում և նույն-
իսկ է՛լ ավելի հեռավոր աշխարհամասում՝ Ամերիկայում։ Գրեթե ամենու-
րեք հայ պրոգրեսիվ մամուլը, առաջագեմ հայ գրողներն ու հրապարակա-
խոսները իրենց գեղարվեստական երկերում ու հոգևածներում արձագանքում
են ռեուլյուցիային։

3. Հարկ է, սակայն, որոշ վերապահություն անել, Հայ պրոգրեսիվ ու
գեմոկրատ գրողների և պուբլիցիստների գրական վերաբերմունքը ողջա-
կան ռեուլյուցիայի նկատմամբ վկայում է, որ ռեուլյուցիան, իր բնույթով
ու առաջադրած հիմնական քաղաքական խնդիրներով՝ լինելով բուրժուա-
գեմոկրատական, իր կատարողների ու մասնակիցների կազմով համաժո-
ղովրդական-համագեմոկրատական էր։ Ուստի, մանավանդ, ցարիզմի լծի
տակ ճնշված ժողովուրդների կյանքում գրեթե բոլոր պրոգրեսիվ հասարա-
կական ու մտավոր հոսանքներն էլ իրենց ձգտումների կատարումն էին սպա-
սում ռեուլյուցիայից։ Բայց, իհարկե, տարբեր հոսանքների ներկայացուցիչ-
ների գրական վերաբերմունքը ռեուլյուցիայի զարգացման տարբեր էտապ-
ներում (մասնավորապես ցարի հոկտեմբերյան տխրահռչակ մանիֆեստից,
Պետական 'Բուժայի հրավիրման մոմենտից և հայ եկեղեցական կալվածք-
ները վերագարձնելուց, հայկական դպրոցների վերաբացումից հետո), սահ-
մանափակ է դառնում։

Պրոլետարիատի հետ չկապված, բայց առաջագեմ գրողների ու հրա-
պարակախոսների վերաբերմունքի ու գիրքի մեջ նկատելի են երբեմն աղա-
ղակող հակասություններ, տատանումներ ու նահանջներ։ Մինչև իսկ մի
շարք գրողներ, որոնք 1905 թվականին ոգևորությամբ ողջունում են ցա-
րիզմի դեմ մղվող ռեուլյուցիոն պայքարը, նույն այդ գրողները հոկտեմ-
բերյան մանիֆեստի հրապարակումից և Պետական Դուժայի հրավիրումից
հետո հրապուրվեցին ու տարվեցին «բարեփոխումներին» իլյուզիաներով,
կովկասյան նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովի «գեմոկրատական» թվացող
ձեռնարկումներով և այլն։

Այդ ամենի վրա այստեղ կանգ առնել հնարավոր չէ, բայց իհարկե,
այդ էլ կարևոր է և չպետք է անտեսել, պատմությունը և գրական ու պատ-
մական գործիչներին չլավացնելու համար։

Մենք այստեղ ուշագրության ենք առնում ռեուլյուցիայի միայն գրա-
կան արձագանքները, այսինքն՝ այն մեծ բեկումը, որ 1905—1907 թվա-
կաններին առաջացավ հայ գրականության մեջ (ներառյալ և ժուռնալիս-
տիկան) գեպի քաղաքական առաջընթաց շարժումը Ռուսաստանում և Ան-
դրկովկասում։

4. Պետք է վճռականորեն հրամարվել սխեմատիկ, ոչ գիտական ու շատ
նայիվ այն պատկերացումից, ըստ որի ռեուլյուցիայի արձագանքները գրա-
կանության մեջ՝ տեսնում էին միայն պրոլետարական գրողների ստեղծու-
թյունի մեջ։ Իրականում, ռեուլյուցիայի նշանակութունը տարածվում
է տվյալ էսպոսայի ամբողջ գրականության վրա և նրա գրական արձա-
գանքները շատ ավելի լայն են, իրենց ստեղծագործությամբ ու ողջ գոր-

ծունեությունը երբեմն տարերայնորեն ունեցողի հետ առնչվում են գրողների շատ ավելի բազմազան խմբեր և պարբերական մամուլի շատ տվելի մեծ թվով օրգաններ, քան պատկերացվել է մինչև այժմ տիրապետող սխեմատիկ ու նայով ըմբռնման համաձայն։

Վերադառնալով ունեցողի վերաբերյալ ժամանակաշրջանի (1905—1907 թթ.) շուրջ գրականությունն ու պարբերական մամուլն ուշագրավ ուսումնասիրելիս՝ մենք հանդիպում ենք այն ուշագրավ և միանգամայն օրինաչափ երեւոյթին, որ ունեցողի ակտիվորեն արձագանքել են ոչ միայն պրոլետարական գրողներն ու ունեցողի սոցիալ-դեմոկրատական մամուլի օրգանները, այլև իրենց աշխարհայացքով ու սոցիալական իդեալներով պրոլետարիատի գասակարգային զիրքերից շատ հեռու կանգնած գրողներն ու գործիչները։

Հանճարեղ խորաթափանցությունը վերլուծելով ռուսական առաջին սեռայության սոցիալական բովանդակությունը և նրա կատարողների և մասնակիցների կազմը՝ Լենինը այն ժամանակ իսկ գրում էր. «Արդի Ռուսաստանում ոչ թե երկու կողմից ուժեր են կազմում ունեցողի բովանդակությունը, այլ երկու տարբեր ու տարասեռ սոցիալական պատերազմներ, մեկը՝ ժամանակակից ինքնակալական-ճորտատիրական կարգի ընդերքում, մյուսը՝ ապագա, արդեն մեր աչքի առաջ ծնվող բուրժուական-դեմոկրատական կարգի ընդերքում։ Մեկը համաժողովրդական կոլով է ազատության համար (բուրժուական հասարակության ազատության համար), դեմոկրատիայի համար, այսինքն՝ ժողովրդի ինքնակալության համար, մյուսը — պրոլետարիատի գասակարգային կոլիզի է բուրժուականի դեմ հանուն հասարակության սոցիալիստական կառուցման»։

Այսպիսով՝ շարունակում է Լենինը, «Ռուսաստանում սոցիալիստների վրա ծանր ու գծվարին խնդիր է դրվում — միաժամանակ երկու պատերազմ մղել, որոնք բոլորովին տարբեր են թե՛ բնույթով, թե՛ նպատակներով, թե՛ այն սոցիալական ուժերի կազմով, որոնք կարող են վճռական մասնակցություն ունենալ այս կամ այն պատերազմում» (հ. 9, էջ 391)։

Հիշենք նաև Վ. Ի. Լենինի՝ «Լե Տոլստոյը, որպես ռուսական ունեցողի հայելին» նշանավոր հոդվածը, որը մեզ հետաքրքրող պրոբլեմն ուսումնասիրելիս՝ հանճարեղ ուղեցույց է գրականագետի, գրականության պատմաբանի համար։

Լենինը գրում է. «Մեծ գեղագետի անվան համադրությունը ունեցողի հետ, որը նա ակներևորեն չըմբռնեց, որից նա ակներևորեն մի կողմ քաշվեց, առաջին հայացքից կարող է տարօրինակ և արհեստական թվալ։ Հո չի կարելի հայելի անվանել այն, ինչ ակնհայտ կերպով ճիշտ չի արտացոլում երևույթները»։

«Բայց մեր ունեցողին, — շարունակում է Լենինը, — չափազանց բարդ երևույթ է, — նրա անմիջական կատարողների և մասնակիցների զանգվածի մեջ կան սոցիալական շատ տարբեր, որոնք նույնպես ակներևորեն չեն բմբռնում տեղի ունեցող անցքերը, նույնպես մի կողմ էին քաշվում պատմական այն իսկական խնդիրներից, որ իրադարձությունների բնթացքը դրել էր նրանց առաջ» (հ. 15, էջ 242)։

Լենինյան հանճարեղ այդ գրույթի լույսի տակ պետք է դիտել նաև գրականության և ունեցողի առնչության, Միտլյան ժողովուրդներին

ամեն մի ազգային գրականության մեջ ունեցողիայի ունեցած արձագանքների հարցը: Այստեղ՝ գրականության բնագավառում ևս ունեցողիայի «անմիջական կատարողների և մասնակիցների մասնայի մեջ կան սոցիալական շատ աարբեր», որոնց թվում նաև այնպիսիները, որոնք թեև չէին հասկանում ունեցողիան, իր բոլոր կողմերով, բայց որոնք իրենց ստեղծագործության և հասարակական գործունեության օրյեկտիվ ընթացքով առնչվում էին ունեցողիայի խնդիրներին: Իսկ եթե խոսքը վերաբերում է, մանավանդ, էպոխայի անվանի ու խոշոր գրողներին, ապա նրանք իրենց ժողովրդի ու հայրենիքի պատմական բախտի հետ ունեցած օրգանական կապերի շնորհիվ՝ անխուսափելիորեն պետք է արտացոլեն և արտացոլել են ունեցողիայի էական կողմերից գոնե մի քանիսը:

5. Հայ գրականության առաջընթաց զարգացման և նրա գաղափարական ուղղության համար ունեցողիայի խորագույն ազդեցության և ստեղծարար նշանակության առաջին և կարևորագույն արտահայտությունը ունեցողիոն պրոլետարական գրական հոսանքի և մարքսիստական քննադատության սկզբնավորումն է այդ տարիներին:

Պրոլետարական գրականության ստեղծման անհրաժեշտությունն ու զարգացման պատմական հեռանկարը հանճարեղ կերպով լուսարանում է Վ. Ի. Լենինը մասնավորապես իր «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» (1905 թ. նոյեմբեր) նշանավոր ծրագրային հոդվածում: Ռևոլյուցիայի առաջնորդի այդ երկը Կոմունիստական պարտիայի գրական-էսթետիկական մանիֆեստն էր՝ հրապարակված համաժողովրդական մեծ ունեցողիայի փոթորկալի օրերին: Հենց այդ իրադրության մեջ Լենինը հրատապ խնդիր էր համարում գրականության և հասարակության, գրականության և դասակարգային պայքարի, գրականության և քաղաքականության կապի ու փոխհարաբերության հարցը լուսարանել անխնա մերկացնելով ու ջախջախելով «արվեստն արվեստի համար» հակաժողովրդական «թեորիայի», գրականության անպարտիականության ու ապադասակարգայնության բուրժուական քարոզների ստույթունն ու ռեակցիոն էությունը. և ի հակադրություն այդ ամենի հռչակում «գրականության պարտիականության սկզբունքը», — Վ. Ի. Լենինի կարևորագույն ավանդը գրականագիտության մեջ» (Ա. Ժգանով):

Լենինյան հանճարեղ տեսությունը լուսավորեց այն ուղին, որով Ռուսաստանի հետ օրգանապես կապված բոլոր ժողովուրդների գրականություններում սկզբնավորվեց՝ ունեցողիայի առաջատար ուժը հանդիսացող պրոլետարիատի կյանքն ու պայքարը և նրա մեծ իդեալները մարմնավորող գրական հոսանքը: Սոցիալիստական ռեալիզմի այսօրվա բազմազգ գրականության նախաշավիղները բացվեցին Լենինյան տեսության լույսի տակ ողջական առաջին մեծ ունեցողիայի փոթորկաշունչ մթնոլորտում:

Այսպես սկզբնավորվեց նաև հայ պրոլետարական գրականությունը:

Անդրադառնալով այն մեծ հեղաշրջմանը, որը հայ իրականության մեջ սկսվել էր ունեցողիայի նախօրյակին և ընթացքում, Ստեփան Շահումյանը 1906 թ. ապրիլին գրում էր, որ՝ ի հակադրություն բուրժուական լիբերալիզմին և որպես «ամենաբնորոշ գիծը մեր նորագույն կյանքի, որ ամբողջովին նորություն է հայկական իրականության մեջ», — երևան է եկել այն

աշխարհայացքը, որը կոչվում է սոցիալիզմ և որի կրողն է բանվոր դասակարգը» («Ընտիր երկեր», էջ 80)։

Ահա այդ աշխարհայացքը հեղաշրջող ազդեցություն ունեցավ նաև հայ գրականության զարգացման վրա։ Հայ իրականության մեջ մեծ է ենթինի հավատարիմ աշակերտներն ու ղինակիցները, մարքսիզմի առաջին խոշոր ներկայացուցիչները՝ Ստ. Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը, իրենց իսկ հիմնադրած բոլշևիկյան հայ մամուլի («Պրոլետարիատի կոիւլը», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր») միջոցով արմատավորում են մարքսիզմը այն միացնելով ռեուլյուցիոն բանվորական շարժման հետ։ Եվ հենց նրանք էլ հանդիսանում են հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները։

Ժողովրդի աղատագրական պայքարի գործին նվիրված, նոր ռեուլյուցիոն ժողովրդային գրականության ստեղծման համար իրենց մղած պայքարում Շահումյանն ու Սպանդարյանը ղեկավարվում էին Լենինի ծրագրային աշխատություններով։ Լենինի «Ի՞նչ անել»-ը, մասնավորապես «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» նշանավոր հոդվածը (1905 թ. նոյեմբեր) ծրագրային նշանակություն են ունեցել նաև հայ մարքսիստական քննադատության և պրոլետարական գրականության ստեղծման համար մղված պայքարում։

6. Ինքարվեստական գրականության բնագավառում պրոլետարիատի ռեուլյուցիոն աշխարհայացքի գլխավոր արտահայտիչը հանդիսացավ բոլշևիկ պոետ Հակոբ Հակոբյանը։ Նրա 1904—1907 թվականների ստեղծագործությունամբ սկզբնավորվում է հայ պրոլետարական գրականությունը։

Մինչև ռեուլյուցիան՝ Հակոբյանն անցել էր ստեղծագործական կյանքի տասնամյա ուղի, բայց միայն ռեուլյուցիայի տարիներին նա գտավ իր ինքնուրույն ուղին ու գրավեց նշանակալից իր տեղը գրականության մեջ, որպես նոր, ռեուլյուցիոն դարաշրջանի պատգամախոս, որպես «մի ամբողջ հասարակական խավի՝ գիտակցության եկող հայ բանվորության բանաստեղծ», «այդ բանվորության ցավերի և ուրախությունների արտահայտիչ, նրանց աշխատանքի և կոլի երգիչ», — ինչպես բնութագրել է նրան Ստեփան Շահումյանը։

Թիֆլիսում՝ 1906 և 1907 թվականներին են լույս տեսնում Հակոբյանի ռեուլյուցիոն բանաստեղծությունների առաջին երկու ժողովածուները («Աշխատանքի երգեր» 1906 թ., «Հեղափոխական երգեր» 1907 թ.), ըստ որում դրանցից երկրորդը պոետի պարտիական ընդհատակյա Պրոլետար ծածկանունով, հրատարակված անլեգալ, առանց ցարական ցենզուրայի թույլտվության, «ՌՍԴԲ(բ)Պ Անդրկովկասյան շրջանային կոմիտեի հրատարակություն»։ Իսկ հայերեն լեզվով առաջին գեղարվեստական գիրքն է, որի ճակատին դրոշմված է պրոլետարիատի ռեուլյուցիոն պայքարի մարքսյան նշանարանը՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»։

Հակոբյանի այդ երկու ժողովածուներն էլ համակված են ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղվող ռեուլյուցիոն պայքարի հրաշունչ պաթոսով։

1905—1907 թվականներին հայ բոլշևիկյան պարբերականներում («Պրոլետարիատի կոիւլը», «Կայծ», «Նոր խոսք»), տպագրված նրա՝ «Թեև բանվոր է, բայց թագավոր է», «Հեղափոխություն», «Մայիսմեկյան երգ», «Իններորդ ալիք», «Պրոլետարիատին», «Մեկ էլ, մեկ էլ», «Դարձի երգ»,

«նահատակները», «Մեռան, չկորան» և մի շարք այլ բանաստեղծությունները ունենում են իր ունիվերսալ անմիջական արձագանքներն են:

Առաջին անգամ Հակոբյանի պոեզիայում պատմական իրականությունը պատկերվում է իր ունիվերսալ զարգացման ընթացքի ու հետևելարի մեջ: Առաջին անգամ բուրժուական հասարակության մեջ ամենից շատ արհամարհված ու թշվառ կյանքի դատապարտված դասակարգը՝ բանվոր դասակարգը պոռնում է պոեզիայի կենտրոնական հերոս: Առաջին անգամ Հակոբյանի պոեզիայում գծագրվում է բանվորի կերպարը, իրեն պատմական առաջընթացը կրող ունիվերսալ ուժ՝ անպարտելիության պոտենցիալով, որի շնորհիվ իրականանալու է սոցիալիզմը:

Աշխատանք և ունիվերսալ պայքար — ահա երկու հիմնական թեմա, իրար հետ օրգանապես միացած երկու հիմնական գաղափար, որոնցով բնութագրվում է Հակոբյանի պոեզիայի բովանդակությունը: Նրա պոեզիան նոր էպոխայի ունիվերսալ գեղարվեստական ընկալման, սոցիալիստական դեպի զարգացման հաստատուն սկիզբն է հայ գրականության, հայ բանաստեղծական մտքի զարգացման ընթացքի մեջ:

Հակոբյանի 1905—1907 թթ. ստեղծագործության հիմնական բովանդակությունը բանվորի ստեղծագործ աշխատանքի հերոսականության ու նրա ստրկական ծանր պայմանների, տիրող հասարակական-քաղաքական կարգերի ճնշող, հակաժողովրդական էության գեղարվեստական բացահայտումն է, այդ կարգերի դեմ ուղղված պրոլետարիատի ունիվերսալ պայքարի պատկերումը:

Ռեուլյուցիայի տարիներին Հակոբյանը տվել է գործարանային բանվորների ծանր աշխատանքի ցայտուն պատկերներ, օրգանապես՝ միացած ցարիզմի ու կապիտալի տիրապետության դեմ մղվող պայքարի մոտիվներին:

Պրոլետարական բանաստեղծի մտածողության, նրա աշխարհայացքի և ստեղծագործական մեթոդի միջև չկա որևէ հակասություն: Նա ճիշտ է հասկանում սոցիալական հարաբերությունների էությունը կապիտալիստական գործարանում, լիովին գիտակցում է, որ բուրժուական հասարակագրում սոցիալական կոնֆլիկտների գլխավոր հանգույցակետը գործարանային աշխարհն է, այստեղ է, որ իրենց շահերի անհաշտելիությամբ բախվում են բանվորներն ու կապիտալիստները: Բանաստեղծը պատկերում է, ահա, այդ աշխարհը և ընթերցողին «... մատուցում իր պատկերած սոցիալական կոնֆլիկտների ապագա պատմական լուծումը» (Ֆ. Էնգելս):

Ահա «Դարբնի երգը»: Դա կապիտալիստական գործարանի բանվորի երգն է՝ համակված պրոլետարիատի դատարարային ուժի գիտակցությամբ և գալիքի նկատմամբ վառ հավատով, Բանաստեղծը պրոլետարիատի ունիվերսալ պայքարը սիմվոլացրել է դարբնի ստեղծագործական աշխատանքի երգով, դարբնի վսեմ կերպարի միջոցով արտահայտել պրոլետարիատի ունիվերսալ պայքարի և ապագա հաղթանակի գաղափարը:

Ջարկ, զարկ, բնկեր, մեղ բաղդ կոենք,

Թող գողգողա մեծ սալը.

Շանթի տարափ մեր շուրջ փոենք —

Լուսավորվի աշխարհը:

Մենք ընտելյան առողջ զավակ՝
Քրտինք հեղենք — սև արյուն,
Ջուրտ բազկով ճարենք վաստակ՝
Մոհառ չլինենք կշնամուն:

Ջարկ, զարկ, ընկեր, էլ կանգ չառնենք,
Մոտ է, ահա, լավ օրը...
Այնպես թափով սալին դարնենք,
Որ դողողա աշխարհը...:

Հակոբյանի պոեզիան ցարիզմի տիրապետության դեմ պրոլետարիատի մղած հերոսամարտերի ամենաուժեղին արձագանքն է հայ գրականության մեջ. ռեոլյուցիայի ընթացքի բոլոր էտապների անդրադարձումը կա նրա բանաստեղծություններում:

Ահա, օրինակ, 1905 թ. հոկտեմբերին՝ ցարական տխրահոչակ ժամանի-ֆեստի ճրտապարակման օրը գրված և բանվորական միտինգում կարդացած «Մեկ էլ, մեկ էլ» մարտական բանաստեղծությունը, որով բուլճերիկ պոետը կոչ է անում Քրանվոր տղերքին՝ նորից ու նորից գրոհելու ցարիզմի արդեն խաբխրված ամրոցի դեմ, նորից ժմի դարկ տալու, որ խորտակվի նա հիմնովին:

Հակոբյանի այդ շրջանի ստեղծագործության տիրապետող պաթոսը պրոլետարիատի գլխավորությունը սկսված ռեոլյուցիոն դարաշրջանի հըռ-չակումն է, ռեոլյուցիայի հնակործան, բայց և ազատարար ու ստեղծարար ուժի փառաբանումը, իր խոսքերով ասած՝ «հեղափոխության այն վեհ ժամին» վրայերգումը, —

Երբ որ բախվեցին իրար հակառակ երկու ախոյան,
Ալիքի նման խուլ մոնչացին երկու հզոր ուժ,
Աշխարհը ցնցվեց... ու եղան կործան կարգերը վատուժ.
Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին հետևեց թափով
Հեղեղ ցնծություն,—
Երկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ ազատության...:

Ռեոլյուցիայի բարձրացող ալիքի՝ Հոկտեմբերյան համառոտական քաղաքական գործադուլի և դեկտեմբերյան զինված ապստամբության տպավորության տակ գրված բանաստեղծություններում բանաստեղծը պատկերում է ցարիզմի խորտակումը և պրոլետարիատի հաղթանակը, որպես իրականություն:

Բայց ռեոլյուցիայի արձագանքը Հակոբյանի ստեղծագործության մեջ չի սահմանափակվում միայն այս տարիների բանաստեղծություններով: 1911—1914 թվականներին գրված «Գարմիր ալիքներ» պոեմը նույնպես պատկերում է պրոլետարիատի ռեոլյուցիոն պայքարը Անդրկովկասում՝ 1905 թվականին Պսևի հերոսները Անդրկովկասի բուլճերիկներն են՝ ազդու-թյամբ հայ, վրացի, ռուս և ադրբեջանցի անձնագործ ու խիզախ ռեոլյուցիոններներ, որոնք միացած են պրոլետարիատի առաջապահ գնդի շարքե-րում՝ հանուն ռեոլյուցիայի հաղթանակի: Պոեմը համակված է պրոլետա-

րական ինտերնացիոնալիզմի ոգով և ունոյուցիայի հաղթանակի անսասան հավատով:

Հակոբյանը նշանակալից դեր է կատարում նաև ուսական ունոյուցիոն երգերի թարգմանության ու ժողովրդականացման գործում: Ռուսոյուցիոն դեմոնստրացիաներին հայ բանվորների համար մայրենի լեզվով ունոյուցիոն երգերի պահանջն առաջինը զգացել է թուրքիկ բանաստեղծը, որը դեռ ունոյուցիայի նախօրյակին սկսում է թարգմանել և ապա՝ թուրքիկյան մամուլում (սկսած, Նոր խոսք և այլն) և իր «Հեղափոխական երգեր» (1907) ժողովածուում հրատարակել հայտնի Վարչապետական, Վնտերնացիոնալը, բանվորական Մարսելյոզը, Անվախ ընկեր, քայլենք շար-շար, Քաղաքի քայլերգ, Առաջ տղերք, մի վհատվիք և այլն:

Սոցիալ-դեմոկրատական և պրոգրեսիվ դեմոկրատական մամուլի օրգաններում շատ նյութեր կան այն մասին, որ այդ մարտական երգերը, ունոյուցիայի տարիներին, արդեն լայն ժողովրդականութուն ունենին: Քաղաքական դեմոնստրացիաներին ու մայրկականերին մասնակցող հայ բանվորներն ու թուրքիկներն իրենց բազմազգ ընկերներին ձայնակցում էին ոչ միայն ուսերեն, այլ նաև իրենց հարազատ մայրենի լեզվով երգելով ունոյուցիոն երգերը:

Բայց միայն Հ. Հակոբյանի ստեղծագործությամբ չի սահմանափակվում ունոյուցիայի շրջանի հայ պրոլետարական գրականութունը: «Եռամյա ունոյուցիոն փոթորկի ժամանակաշրջանում» (Լենին) ծնված նոր հոսանքի սկզբնավորման ու հետագա զարգացման պատմության մեջ իրենց տեղն ունեն նաև հայ պրոլետարական արձակագրության առաջնեկներ՝ Մարգար Պետրոսյանը, Մովսես Արադին, անվանի թուրքիկ Մելիք Մելիքյանը, առաջին պրոլետարական կին գրող Մարո Զուրարյանը, բանվոր գրամատուրգ Անուշավան Վարդանյանը, որի «Գործադուլ» պիեսը (գրված 1905 թվականին) հայ պրոլետարական գրամատուրգիայի ավետարեր ծիծեռնակն է: Այս գրողների ստեղծագործական կյանքն սկսվում է ունոյուցիայի տարիներին և նրանք հենց սկզբից հանդես են գալիս, որպես պրոլետարիատի կյանքի ու պայքարի արտահայտիչներ:

7. Իր ստեղծագործության լավագույն էջերով բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդինյանն էլ օրգանապես կապված է եռամյա ունոյուցիոն փոթորկի ժամանակաշրջանի» (1905—1907 թթ.) հետ:

Բանաստեղծուհին ժամանակին գրել է, որ ինքն իրեն պարտական է զգում «ուսական կյանքին, վերածննդի փոթորկոտ օրերին և հատկապես ուսական պրոլետարիատին»: «Ռուսաստանն իմ քաղաքական մոտիֆների հայրենիքն է», — գրել է Կուրդինյանը 1909 թվականին՝ պատասխանելով Յուրի Լեսելովսկու անկետային¹:

Հետագայում գրած իր ինքնակենսագրության մեջ Կուրդինյանն ավելի մանրամասնորեն անդրադառնում է այն վճռական ու բախտորոշ բարերար ազդեցությանը, որ ունեցել է ունոյուցիոն Ռուսաստանը իր ստեղծագործական-գաղափարական կյանքի համար:

Կուրդինյանն ասում է. «1905 թիվը եղավ իմ վերածնության տարին: Ռուսական հեղափոխութունը և պրոլետարիատը բացին իմ առջև պրոլե-

¹ Юрий Веселовский, Русское влияние в соврем. армянской литературе, 1909. стр. 25.

տարական խմաստությունը բոլոր գաղտնարանները և իմ ազգասիրական երգերն օրեցօր թռչնեցին՝

Եվ իրոք՝ 1905—1907 թվականներին Կուրդինյանի ստեղծագործական-գաղափարական դեմքը հիմնովին փոխվում է։ Մինչ այդ սոսկ անձնական ապրումների, մասամբ և ազգային վշտի մոտիվներ երգող բանաստեղծուհին ուժգնորեն, առնական ձայնով արձագանքում է Ռուսաստանի ռեյտինգի ձգտողներին փոխարկող օրերին։ Առավելապես 1905—1907 թվականներին գրված բանաստեղծություններն ամփոփող առաջին ժողովածուն (1907) «Արշալույսի զոհանքներ» արտահայտիչ վերնագրով՝ Կուրդինյանի հոգեկան վերափոխման ուժգին արտահայտություն է և այդ էպոսայի հայկական պոեզիայում նշանակալից երրորդ դիրքը՝ Հակոբ Հակոբյանի «Աշխատանքի երգեր» (1906) և «Հեղափոխական երգեր» (1907) ժողովածուներից հետո։ Ամենից առաջ և ամենից ավելի այդ երեք գրքերով է նշանավորվում ռեյտինգայի հուժկու արձագանքը հայկական պոեզիայում։

Բազմաթիվ հայ կին գրողներից Կուրդինյանն առաջինն էր, որ այն ժամանակ կանգնեց գրականության ռեյտինգի ուղու վրա և իր քնարը նվիրեց Ռուսաստանի ժողովուրդների ազատագրական պայքարին։ Ես հոգեկան խիզախ թռիչքով վեր բարձրացավ կնոջ կրկնակի ստրկական վիճակից, հասավ հասարակական-քաղաքական գիտակցության բարձրակետին և Հակոբ Հակոբյանի հետ միասին՝ հուժկու ձայնով հնչեցրեց նոր դարաշրջանի Բարձրալույսի զոհանքները՝ հայկական պոեզիայում։

Կուրդինյանի այդ տարիների ստեղծագործության մեջ տիրական է պրոլետարիատի ճգնաժամային կոլի կոչն ուժգին, ինչպես արտահայտում է նա իր բանաստեղծություններից մեկում։

Կուրդինյանի պոեզիայում հաճախ միևնույն բանաստեղծության մեջ բանվորների և ամբողջ աշխատավոր ժողովրդի տանջանքով ու զրկանքով լի կյանքի պատկերները միահյուսվում են սոցիալական կոլի, ռեյտինգի պայքարի կոչերին։ Այդպիսին է «Բանվորներ» (1907) մարտաշունչ բանաստեղծությունը, որը գրված է հուժկու պաթոսով և արտահայտում է պրոլետարիատի ու բոլոր շահագործվողների զբաղվող վշտից՝ կուտակված սոցիալական բողոքի ու զայրույթի պոթիկումը։ Դա պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության արթնացման հզոր արձագանքն է. դա կոլի էլած դասակարգի գրոհի որոտաձայն երգն է, ռեյտինգի կոլի հզոր կոչը, որ տոգորված է անհուն ցասման անգույնի ուժով և արտահայտում է պրոլետարիատի անսասան վճռականությունը կոլում և անհուն հավատը հաղթանակի նկատմամբ։ Ցայտուն պատկերավորությամբ ներկայացնելով բուրժուական հասարակության մեջ իշխող սոցիալական անհավասարությունը և հակադրությունը, — մի կողմից «կիսաքաղց կյանքի» դատապարտված բանվորների և մյուս կողմից «տղրուկներին» դասակարգի՝ բուրժուազիայի միջև, — բանաստեղծուհին՝ ռեյտինգի ինքնագիտակցության եկող պրոլետարիատի պայքարի կոչն է հնչեցնում։

Հա, մենք ենք դավիս,—

Դարևոր վշտի, զրկանքի բովից,

¹ Հայկական ՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան, Շ. Կուրդինյանի արխիվ, № 80,

Հալածանքների, դարձ ստրկության մոռացված խավից —
 Կրճքով փշրելու փառքը տիրողին,
 Գա՜նք բռնության — ստրկերի շղթան,
 Նոր ուղի հարթել մեր նմաններին,
 Արժանի կոչման — համասարության
 Այդպես ենք գալիս...

Առանձնապես այս տարիներին գրված բանաստեղծություններում Կուրդինյանը հաճախ է գրում արծաթյա թուխքի փոխարենության: Իսկ արծիվը, իրրե ուղղված գաղափարի մարմնավորման սիմվոլ, նրա ստեղծագործական մտահղացումներում նույն գերն ու իմաստն ունի, ինչ որ Վալարտ ու խիղախ բաղեն՝ Մ. Գորկու նշանավոր «Երգ»-ում: Ակնհայտ է Կուրդու ազդեցությունը Կուրդինյանի վրա: Օրինակ «Արծիվը» վերնագրով բանաստեղծությունը հիշեցնում է Գորկու նշանավոր «Բաղեն» երգը:

Այստեղ էլ Վալարտ արծիվը՝ ատում է երկրի անաղատ կյանքը, ճաղատ երկնքի տակ: Նա ատում է, մանավանդ, ստրկությանը և բոլոր նրանց, որ սողալով են ապրում դարձ ստրկության մեջ: Արծիվն իր ճարձարանիստ ազատության մեջ մտախոհ ու տրտում է, ճանաղատ կյանքից ճնշված մարդկանց համար: Բանաստեղծունիքն երազում է այն մասին, որ բոլոր մարդիկ ազատ շնչեն «կապույտ անհունի շունչը»՝ ճարձունքներում, իր պես սրարշավ, թուխքի ծարավ:

Այդ արծիվային ազատաթիրության գաղափարով համակված բանաստեղծունիքն արձագանքում է ուղղված իրային, փառաբանում մարտական գիրքերում, բարիկադների վրա ընկած ճաղարի ըմբոստ հոգիներին, ուղղված իրային անձնուրաց զինվորներին, որոնցից շատերն իրենց մահով վաղաժամ, թխում են ազատության անթառամ գափին» («Մեր օրերը»):

Կուրդինյանի պոեզիայի համար հատկանշական է այն, որ նրա այս տարիներին բանաստեղծությունների մի զգալի մասը, կարծեք, համաժողովուրդի պրոկլամացիաներ են ուղղված ժողովրդին, բանվորներին ու գյուղացիներին՝ կոչի նախօրեին կամ հենց գրոհի ընթացքում: Այդ ընդլայնված բանաստեղծություններից հիշենք՝ «Հառաջ, անվահեր», «Բանվորի երգը», «Ազատության զոհանջները» (1906), «Եկեք, միանանք», «Ձեզ ձայն եմ տալիս» (1907), «Երկրի ձայնը» (1907), «Հայ բանվորներին» (1907), և մի քանի այլ բանաստեղծություններ, որոնք բոլորը տողորված են մի հիմնական գաղափարով՝ ճնշվածներին — աշխատավորներին ազատագրական շարժմանը մասնակից դարձնելու և անձնագործ կոչի հաղթանակի գաղափարով:

Կուրդինյանն արձագանքում է ուղղված իրային ոչ թե միայն ընդհանուր առմամբ, այլև կոնկրետ, առանձին մեծ իրադարձությունների, ուղղված իրային ամենահերոսական գրվագների պատկերումով: Ահա, օրինակ՝ ուղղված իրային ամենահերոսական գրվագին՝ ղեկավարության զինված ապստամբությունը՝ Կուրդինյանն արձագանքում է ոչ թե շատ հետո, այլ անմիջապես, հենց նույն օրերին, երբ ամբողջ Ռուսաստանում ճաղաքացիական պատերազմը եռում էր՝ (Լենին, հ. 10, 107) հասնելով իր գագաթնակետին՝ Մոսկվայի զինված ապստամբությանը: Ռեուլյուցիայի հենց այդ փառապանծ ղեկավարության օրերն է պատկերված Կուրդինյանի «Դեկտեմբերի օրեր»

րից՝ վերնագրով րանաստեղծության մեջ, որը գրվել է նույն թվականի դեկտեմբերի 22-ին:

8. Ռեուլյուցիայի շրջանում րանվորները կյանքի ու պայքարի թեման տարեց տարի ավելի ակնառու տեղ է գրավում նաև հայ առաջագեմ ու գեմոկրատ գրողների ստեղծագործության մեջ:

Այդ երևույթն ինքնին շատ ուշագրավ է և բացահայտում է ժամանակի առաջագեմ հայ գրողների ակտիվ համակրանքը պրոլետարիատի նկատմամբ: Վ. Փափաղյանի, Ալ. Շիրվանզադեի, Ալ. Ծատուրյանի, Արի. Արիարյանի, Վ. Տերյանի և մի շարք այլ գրողների ստեղծագործության մեջ ուշագրավ գեղարվեստական երկեր կան նվիրված րանվորների կյանքին ու դասակարգային պայքարին:

Բանվորների անողոր շահագործման, նրանց ողբերգական կյանքի պատկերմանն է նվիրված Վ. Փափաղյանի «Մշուշը» պատմվածքը...

Վ. Փափաղյանի մյուս երկերից ուշագրավ է «Վիշապ» այլարանական դրույցը, ուր հեղինակը պատկերում է ժողովրդի ապրած ճնշումն ու շահագործումը և աղատագրության ելքը տեսնում է րանվորի ուժի մեջ: Հեղինակն ասում է, որ ժողովրդին տանջող «Վիշապը», կարող է ոչնչացվել միայն լիազվե գոգնոցով հսկայի», այսինքն՝ րանվորի հղոր կամքով ու ձեռքով:

Մինչև ռեուլյուցիան էլ րանվորական կյանքի թեման անծանոթ չէր մեծանուն վիպագիր ու գրամատուրգ Ալ. Շիրվանզադեին: Նրա ստեղծագործական կյանքի սկիզբը և հետագա ուղին նշանավորված է Բաքվի նավթաշխարհը պատկերող հոյակապ երկերով, որոնց բաղմաղան հերոսների պատկերասրահում կան նաև րանվորների ռեալիստական կերպարներ. «Հրեհն հավթագործարանում» պատմվածքը (1883), «Դառա» վեպը (1898) և այլն: Բայց նախառեուլյուցիոն շրջանի այդ երկերում րանվորների կյանքի պատկերումը չի կապվում (և չէր էլ կարող կապվել) ռեուլյուցիոն պայքարի հետ:

Ուստի և առանձին արժեք ունի ռեուլյուցիայի շրջանում գրված Շիրվանզադեի պատմվածքը՝ «Եղրայրասպանը (Պատկեր)» վերնագրով, Այստեղ անվանի վիպագիրը խորը համակրանք է արտահայտում րանվորների ռեուլյուցիոն պայքարի նկատմամբ, թեև պատմվածքում չի ցուցադրված այդ պայքարը՝ հերոսների ռեուլյուցիոն գործողությունների պատկերումով: Հեղինակի համակրանքն արտահայտվում է նրանով, որ պատմվածքում մերկացված ու գատապարտված է մատնչությունն ու լրտեսությունը, որն օգտագործում էր ցարական ոստիկանությունը րանվորների ընդհատակյա ռեուլյուցիոն կազմակերպությունների դեմ: Շիրվանզադեն ներկայացնում է ժամանակաշրջանի իրական մի պատկեր, թե ինչպես մի աղնիվ արհեստավոր (կազմարար) սպանում է իր՝ այլասերված, կյանքի հատակն ընկած եղրորը, երբ ակնառու փաստերով համոզվում է, որ նա դավաճան է, րանվորներին լրտեսելով ծառայում է ցարական ոստիկանությանը, դարձել է մի փաստակար սողուն, որին պիտի ոչնչացնել» — ինչպես ասում է նա՝ պատմվածքի աղնիվ հերոսը՝ կազմարար Արամը:

Մոսկվայի րանվորների ղեկավարության ղինված ապստամբության արձագանքն է անվանի րանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի հանրահայտ «Բանվորունու օրորը»: Ծատուրյանը Մոսկվայում էր և խորապես վերապրելով րանվորների հերոսական կռիվը, վերարտագրել է այն իր հուղիչ բանաստեղծությամբ:

Այստեղ գծագրված է իր դասակարգի հերոսական մեծ կռիվ՝ բախտով ապրող ազատասեր բանվորունու հմայիչ կերպարը, բանվորունու, որն իր օրասուն զավակի օրոցքի մոտ՝ մայրական քաղցր օրորի՝ փոխարեն մեծ կռիվ երկն է հյուսում, որպեսզի իր զավակն էլ այդ մարտաշունչ երգով սնվի և ձգտի դեպի Շնոր կյանքի եզերքը:

Մի՛ լար, որդիս, որ չես լսում,
 էլ մայրական քաղցր օրոր,
 Ես մեծ կռիվ երգ եմ հյուսում
 Օրոցքիդ մոտ ամեն օր:
 Դու լսում ես, այնտեղ դրսում,
 Շաչ ու շառաչ, լաց ու կոծ,—
 Մեր արյունն է այնտեղ հոսում,
 Ներկած և՛ տուն, և՛ փողոց...
 Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
 Բանվոր գնդեր ահարկու,
 Քաջ մղում են մի մեծ կռիվ —
 Աշխատանքի և ոսկու...
 Այնտեղ է և մեր աչքի լույս,
 Մեր օջախի վառ ճրագ —
 Հայրդ՝ կռվում, սիրտն ալեհույզ
 Սրտում և թույն, և կրակ:

Ռեդյուցիայի տարիներին նախ Հազարյան ճեմարանի և ապա Մոսկվայի համալսարանի ուսանող էր ապագա անվանի բանաստեղծ Վահան Տերյանը, որի ստեղծագործական կյանքն սկսվում է 1904—1905 թվականներին: Տերյանը մոտիկից ականատես էր Մոսկվայի պրոլետարիատի հերոսական պայքարին: Նա ևս այս տարիներին արձագանքում է «անվերջ աշխատանքից» տանջված բանվորների կյանքին, պատկերում իրականության մեջ տիրող սոցիալական կոնտրաստը և բանվորների քաղաքական դարթոնքը: Ահա, նրա մի բանաստեղծությունը, ուր գծագրված է դասակարգային գիտակցության եկող բանվորի լիրիկական կերպարը: Թեև բանաստեղծության մեջ չեն գործածված «բանվոր» ու «գործարան» բառերը, բայց ակնհայտ է, որ խոսում, խորհրդածում է գործարանային բանվորը, որի սոցիալական վշտի և բողոքի ու ըմբոստացման ապրումներն է արտահայտել պոետը:

Արևն արթնացավ, արևը մեզ ինչ,
 Նա մեզ չի բերում իր շողերը ջինջ.
 Մեր վրա մոայլ կամարն է հեգնում,
 Անսիրտ մեքենան ելնում ու ընկնում:
 Անվերջ աշխատիր, տանջվիր անդադար,
 Ու՛ աշխատանքդ ուրիշի համար:
 Բավական է, վերջ, մենք էլ չենք ուղում
 Սիրո երգ, անընք, վայելք ու հուզում,
 Վեր կաց, իմ ընկեր, վեր կաց, մուրճդ ան.
 Նոր կյանք, նոր վայելք կոենք մեզ համար...

Այն ժամանակ իր հիմնական տրամադրությամբ «մթնաշաղախի անուրջներով» տարված զգայուն բանաստեղծը մերթ ընդ մերթ ներքնապես լուսավորվում է հույսի շողերով, որոնց վայլի տակ երևում են «հեռավոր անել լեռնագագաթներ», «պայծառ արևի գահեր հիասքանչ»։ Նրա հոգու մեջ կայծկլտում են այդ հույսի շողերը, որոնք և հետագայում բաց են անում նրա առաջ լուսեղեն ուղի դեպի «անել լեռնագագաթներ» (հ. 1. 53)։ Տերյանի պոեզիայում այդ տարիներին կոշմարային իրականության մահաշունչ պատկերին փոխարինում է «ահեղաշաչուն մրրիկի» պատկերը՝ «ազատության երգը», «մարտի ցնծությամբ»։ Այդ տրամադրությունն արտահայտված է «Հոկտեմբերին» վերնագրով մարտաշունչ լիրիկական բանաստեղծության մեջ՝ գրված 1907 թ. («Երկրի ձայն», 1907, 28)։

Հեռացիր, աշուն համրորեն լացող,
Ողջ՞ւյն քեզ մրրիկ ահեղաշաչուն,
Ողջ՞ւյն քեզ կովի առաջին հնչյուն,
Հույսի պես կարող, խոսքի պես խոցող...

Երկիր իմ հոգին մարտի ցնծությամբ,
Բորբոքի սիրտս, ազատության երգ,
Շողա, մռայլում, ըղձալի եզերք,
Որոտա, շաչիր, փոթորկավետ ամպ...

1905 թ. դեկտեմբերին գինված ապստամբության պարտությունից հետո «ժողովուրդների բանտ» երկրում ամենուրեք բարձրանում են կախաղաններ՝ անձնազոհ ռեվոլյուցիոներների, ցարիզմի դեմ մարտնչած բանվորների, գինվորների ու գյուղացիների արյունոտ մարմինների ցուցադրումով՝ ի սարսափ կենդանի մնացածների։ Ահա այդ իրողության տպավորությունները Տերյանն արտահայտել է «Լուսարացին նա բարձրացավ կախաղան» բանաստեղծությամբ։

Մի այլ բանաստեղծության մեջ («Աքսորավայրում» վերնագրով) բանաստեղծը երևակայությամբ փոխադրվում է սառցով ու ձյունով պատած հեռավոր աքսորավայրերը...

Այնտեղ նա տեսնում է «թշնամուց գերված» շղթայակապ մարտիկների տաժանակրությունը և տեսնում է «ըղձալի գարնան շառաչուն», — «կարող ու պայծառ փոթորկի պայթյուն», «փոթորիկ ժողովրդական»...

Ահա օպտիմիստական այդ տրամադրությամբ աքսորավայրը պատկերող բանաստեղծության մեջ սառցապատ Սիբիրյան աքսորավայրի պեյզաժը խորապես համակված է նոր փոթորկի կանխագագումով։ «Ամպոտ երկնքի» մռայլության մեջ «շողում է կայծակը», «վրեժի մահարեր դաշունը»՝ ուղղված «մութ բռնության դեմ»։

Լուռ է գիշերը՝ սառույց է ու ձյուն...
Պ սղ լուսությունը մռայլ է ու չար.
— Զարթիր ըղձալի գարնան շառաչուն.
Պայթիր փոթորիկ, կարող ու պայծառ:
Լուռ է երկիրը՝ Երկինքը ամպոտ.

Մեկը թախծագիրն նայում է հեռուն,
 Մեկը կանչում է՝ «Զարթիր առավոտ».
 Ու շղթաներով աղմուկ է հանում...
 Ու մի արձագանք... գիշեր է ու ձյուն...
 Հանգիստ ննջում է մռայլ շրջական,
 — Շողա, վրեժի մահարեր դաշուն,
 — Հնչիր փոթորիկ ժողովրդական...»

Այդ տարիներին գրված բանաստեղծություններից մեկում Տերյանը անգրագարձնում է բուրժուական քաղաքի դաժան ու մռայլ պատկերը, միաժամանակ արտահայտում է այն գաղափարը, որ այդ մռայլ, անարև քաղաքի խորքից սոցիալական ցասումն է ժայթքելու:

Ժամանակակից բուրժուական քաղաքը, բնութագրելով իրեն Բարելոն, բանաստեղծն ասում է, որ նրա «պաղ շենքերի մութ նկուղներում» աճել է «մի անեղ ցիլիոն» և որ բուրժուական քաղաքների «խնճույթների լայրձ քառսում, ալ ուրվականն իր դաշունն է սրում»: Ակնհայտ է, որ «ալ ուրվականի» մետաֆորով բանաստեղծն արտահայտում է ուռլյուցիայի գաղափարը: Դա մեղ հիշեցնում է «Գոմունիստական մանիֆեստ»-ի հայտնի էջերը, ուր խոսվում է Եվրոպայի վրա շրջող «կոմունիզմի ուրվականի» մասին:

9. Հայ գրականության մեջ բանվորության կյանքի ու դասակարգային պայքարի թեման չի սահմանափակվում միայն կոմկուսյան իրականությամբ: Այդ թեման նշանակալից չափով տեղ ունի նաև արևմտահայ գրողների ստեղծագործության մեջ:

Արևմտահայ գրականության մեջ ուշագրավ են, մասնավորապես՝ անվանի գրող ու հրապարակախոս Արփիար Արփիարյանի «Մինչև երբ» պատմվածքը և «Ոսկե ապարանջան» վիպակը: Այս երկերը ուռլյուցիայի ժամանակաշրջանի հայ պրոգրեսիվ գրականության այն էջերից են, որոնց մեջ ցայտուն կերպով անգրագարձել է էպոսայի հիմնական սոցիալական կոնֆլիկտը՝ բանվոր դասակարգի և բուրժուազիայի դասակարգային հակադրությունը, բանվորների ձգտումը ազատագրվելու սոցիալական ճնշումից ու շահագործումից:

«Մինչև երբ» պատմվածքի համեմատությամբ ավելի հետաքրքրական է «Ոսկե ապարանջան» վիպակը: Այստեղ հումանիստ հեղինակն իր բանվոր հերոսների հետ միասին հանգում է բանվորների դասակարգային պայքարի անհրաժեշտության գաղափարին: Ուշագրավը նաև այն է, որ Արփիարյանի բանվոր հերոսը խստորեն ֆենադատում է հայ գրողներին այն բանի համար, որ նրանք ամեն ինչի մասին գրում են, բայց անտեսում են բանվորներին:

Բանվորների երկու տիպական կերպարներ կան վիպակում. հանձին վարպետ զրաշար Ղուկասի՝ ներկայացվում է հին տիպի, իր դասակարգային ինքնագիտակցությանը չհասած բանվորը, իսկ հանձին նրա երիտասարդ աշակերտ բանվոր Արտուշի՝ գծագրված է բանվորության նոր սերնդի ներկայացուցչի կերպարը, որը հասել է դասակարգային ինքնագիտակցության և իր «արհեստակիցներին» ցույց է տալիս ազատագրության միակ

4 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1950, էջ 103:

ճիշտ ուղին՝ դասակարգային կռիվի ուղին, ... Ձեռքերնիս կոտրտողը կապիտալն է, արհեստավորին օճախի մուխը մարողը կապիտալիստն է, անոնց հախեն գալու ենք քի, աղատինք...»¹ — ասում է բանվոր Արտաշը իր բնակեր բանվորներին:

10. Լենինը «1905 թվականի ռեուլյուցիայի մասին» իր նշանավոր գեղուցման մեջ, ասում է, որ «բանվորական շարժման կապակցությամբ» պրոլետարիատի ռեուլյուցիոն պայքարի ազդեցությամբ էր, որ այն ժամանակ «Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազգային ազատագրական շարժումը» (հ. 23, էջ 323—30):

Բայց ռուսական ռեուլյուցիայի յուրահատկությունը նաև այն էր, որ ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը միահյուսվեց պրոլետարիատի ռեուլյուցիոն պայքարին: Ցարիզմի դեմ մղվող համաժողովրդական ազատագրական պայքարը Ռուսաստանում ճնշված ժողովուրդների, ուրեմն և հայերի համար՝ միաժամանակ թե ազգային, և թե սոցիալական ազատագրական պայքար էր:


Դրանով է պայմանավորված այն, որ 1905—1907 թթ. ընթացքում գրականության մեջ ռեուլյուցիայի ունեցած արձագանքներում նշանակալից տեղ են գրավում ազգային կյանքի և ազատագրական պայքարի թեմաները՝ զգալի հաճախությամբ միահյուսված սոցիալական կյանքի ու պայքարի մոտիվներին:

Ռեուլյուցիայի բարերար ազդեցությամբ ազգային ազատագրության գաղափարը հանգում է ժողովրդի սոցիալական ազատագրության գաղափարին: Արտաքին ճնշումից հայրենիքի ազատագրությունը դեռ լիակատար ազատություն չէ աշխատավոր ժողովրդի, այսինքն՝ ազգի մեծամասնության համար, ինչքան դեռ չեն վերացել ունեոր, շահագործող դասակարգերը, որոնց համար հայրենիքի ազատությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ ասպանություն իրենց բացարձակ ու անբաժան գերիշխանությունը ժողովրդի վրա: Ահա այդ մեծ գաղափարն է մարմնավորում Ավետիք Իսահակյանի «Գարիբալդիականը» վերնագրով պատմվածքը (գրված 1907 թվականին):

Պատմվածքում գեղարվեստորեն ու ռեալիստական խորությամբ մարմնավորված է այն միտքը, ըստ որի արտաքին ճնշման վերացումից, ազգային անկախությունից օգտվում են առավելապես երկրի «արյունակից տերերը», որոնց դեմ նույնպես պետք է պայքար մղել ու վերացնել սառնեղակազգային սոցիալական ճնշումն ու շահագործումը, բնկճել ունեոր դասակարգերին և այն ժամանակ միայն աշխատավոր ժողովուրդը կարող է հասնել իսկական ազատագրությանը, տեղ գտնալ իր կյանքին ու աշխատանքին և երջանկություն վայելել իր ազատ հայրենիքում: Այսպիսով՝ մեծ բանաստեղծն այս պատմվածքում հանգում է նաև՝ կապիտալիզմի, բուրժուազիայի տիրապետության ոչնչացման անհրաժեշտության գաղափարին: Ծերունի Գարիբալդիական Ջիովաննիի վսեմ կերպարը այդ մեծ ճշմարտությունն է արտահայտում:

Ձի կարելի անտեսել, որ Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ուղին նկատելի զիգզագներ ունենր. բայց ակնհայտ է և այն, որ մեծ բանաստեղծի սոցիալական ու քաղաքական ձգտումների սլաքներն ակնհայտորեն ու շեշտակի ուղղված էին երկրում տիրող ռեալիտիոն ռեժիմի ու ժողովրդի սո-

¹ Արփիադ Արփիադյան, Ընտիր երկեր, 1951, էջ 331:



ցիալական շահագործման դեմ: Ակնհայտ է ժողովրդաշունչ մեծ բանաստեղծի ապրած սոցիալական հուզումների ու տենչերի հիմնական ուղղությունը:

Ռեոլյուցիայի նախօրեին բանաստեղծը «մեծ ճշմարտությունն» էր որոնում, տանջալից ձգտում էր արտահայտում՝ գտնելու դեպի այն տանող հուսալի ուղին: Բայց չէր գտնում որոնածը, որովհետեւ բանաստեղծը դեռ հեռու էր կանգնած ազատագրության ճշմարիտ ուղուց: Այս շրջանի ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկը՝ քաղաքական-ազատագրական պայքարն է «ընդդեմ բռնության»: Հիշենք նրա «Ազատության զանգ» նշանավոր բանաստեղծությունը, որն արտահայտում է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Գովկասի ազատագրության գաղափարը:

Բանաստեղծը կոչ է անում, որ զարթնեն «գարեոր նիրհից Մասիս ու Կազրեկ», «քնած առյուծները» «բաշերը թոթվեն» ու գրոհի ելնեն:

... Եվ բավական է անարդ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներըս շղթա,
Կապանք փշրելու մեզ թույն ու կրակ,
Մեռ ուժ և կորով, վըրեժ որոտա:

Եվ մեզ ամենքիս մըռնչա, կոչե՛
Մահվան ու փառքի դաշտը պայքարի,
Սրբազան ոազմի շեփորը գոչե՛,
Ընդդեմ բռնության, ամբարիշտ Չարի:

Ակնհայտ է, որ «ամբարիշտ Չար» ասելով՝ բանաստեղծը նկատի ունի ինքնակալ ցարին (Չար=Ցար): Ստորագրելով «ամբարիշտ Չարին»՝ ժողովուրդները կդառնան «անկախ, ինքնիշխան», բայց չեն հեռանա ու չեն հակադրվի իրար. նրանց կմիացնե «գաշն ազատական» և «սուրբ եղբայրություն» վսեմ գաղափարը:

Օտարերկրյա ազգային ճնշումներից ազատ ժողովուրդներ՝ իրենց ազատ հայրենիքներով, միջազգային համերաշխության, «սուրբ եղբայրություն» հանրամարդկային իդեալով, — ահա, այս է կազմում Խաչակյանի պոեզիայի քաղաքացիական մոտիվների, նրա հայրենասիրության բուն էությունը:

Նախառեոլյուցիոն շրջանի ստեղծագործության այդ հիմնական մոտիվներն ավելի ուժգնորեն ու միասնաբար են արտահայտվում նաև ռեոլյուցիայի տարիներին:

Ժողովուրդների «համատարած վշտի» հառաչանքից ու ցասումնալի բողոքից էր բոնկվել համաժողովրդական պայքարի բոցը, որ օրեցօր բորբոքվում էր և սպառնում այրել, խորտակել շահագործողների տիրապետության ամբողջները:

Ականատես այդ իրողությունը, ազատասեր և հայրենասեր բանաստեղծը թողնում է ճշմարտության ուղիների ապարդյուն որոնումները սոցիալական-քաղաքական պայքարից դուրս, սիրտը վառված «անհուն վրեժի և ատելության» կրակով, նա ևս սոցիալական ու քաղաքական կռիվի

մարտակոչն է հնչեցնում ընդդէմ բոնակալական կարգերի: Բանաստեղծն ասում է, որ ինքը «չի բերում խոսքը հաշտութեան, որ ծանր է նստում զրկւածի ուսին», այլ՝

Անհուն վրեժի և ատելութեան
Պատգամն եմ վառում ես ձեր սրտերում...

Այդ մարտական լավատես տրամադրութեամբ գիմելով հարստահար-վածներին, Իսահակյանը զինված պայքարի կոչ է անում՝ նրանց «սրտի մեջ վառելով հուրն ազատութեան և իրավունքի»

...Ո՛վ դու ցնցոտի,
Ի՞նչ, որ քո ձեռքին կռել ես շղթա,
Դու, որ քրտինքդ դառն ծովացած՝
Նզովք ես շինել և լուծ քո վրա—
Ես քո ժանիքը սրում եմ ահա:
Կանգնեցնում եմ բազուկդ ահա,
Ինչպէս ռիսկալ օձն անապատի,
Եվ քո քարացած բռունցքում հիմա
Ես սուրն եմ դնում ահեղ ճշմարտի:

Փաղափարական անշեղ, վերընթաց գծով չի գնում Իսահակյանը, զիգ-դագներ ու վայրէջքի ապրումներ էլ կան այս տարիների ստեղծագործու-թեան մեջ, բայց տիրապետողը կովի, պայքարի, ըմբոստացման և արծ-վային թռիչքի տրամադրութեանն է: Զգացվում է նաև դորկիական «Մըրը-կահաւի երգի» շունչը Իսահակյանի, հատկապէս այս տարիների ստեղծա-գործութեան մեջ: Երբեմն, առանձին փոխարեքութեաններում առկա է Գորկու պատկերավորման ձևն իսկ: Եվ դա պատահական չէր, հիշենք, որ Իսահակյանն է առաջինը հայերեն թարգմանել Գորկու այդ նշանավոր եր-կը (1901): Այնուհետև Իսահակյանը յուրահատուկ տրամադրութեամբ ձայ-նակցում է «Մըրկահաւի երգ»-ին:

Մոռալ ամպերից հըզոր կայծակով
Սիրտը շանթահար մի մըրկահաւ,
Որ սավառնում էր, հըրճվում փոթորկով,
Ծովափնյա խոժոռ ժայռերին ընկալ... (Ա. 160)

Եվ ճիշտ այդպէս: Բանաստեղծն ինքն էլ սրտով-հոգով «սավառնում էր, հըրճվում փոթորկով», բայց և ընկնում էր «ծովափնյա... ժայռերին», որ-պէս «շանթահար մի մըրկահաւ», որ այլևս ուժ չունի բարձրանալու, այլ միայն «սրտի մեջ կրակ ու կայծակ»՝ «նա լուռ հիշում է» իր խիզախ սա-վառնումները՝ ամպերից էլ վեր: Բայց մեզ այստեղ հետաքրքրում են Իսահակյանի հենց այդ մըրկաշունչ սավառնումները, նրա ստեղծագործու-թեան այն էջերը, որոնց մեջ արձագանք է գտել, ինչպէս ինքը՝ բանա-ստեղծն է ասում՝

Մարտահրավերը վե՛հ ազատութեան,
Ըմբոստ ամբոխի ձայնը մրրկալից,
Երգեր մարտական, շեփոր ռազմական,
Վառ դրոշակի խրոխտ ծածանում,
Ջենքի շառաչուն, ձիերի դոփշուն,
Քայլեր առնական...

11. Հայկական գյուղում տեղի ունեցող սոցիալական պայքարն անդրադարձնող Վ. Փափաղյանի նշանավոր «Ժայռ» դրամայի (1904—1907), «Հողի աշխատավորը» (1906) պատմվածքի, Հար. Ծուղուրյանի «Չատոյի րախտի անիվը» վիպակի (1906) և մյուս գրողների մի շարք երկերի հետ միասին, հայ գրականությունն արձագանքել է նաև Անդրկովկասի գյուղացիական շարժման ամենահզոր օջախի՝ Վրաստանի գյուղացիության պայքարին:

Այս թեմայով գրված ամենանշանակալից երկը մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքն է՝ գրված 1906 թվականին:

Ուշագրավ է պատմվածքի սկիզբը, ուր հեղինակը խանդավառ տրամադրությամբ վերհիշում է հերոսական տարին՝ 1905 թվականը. «1905-ին էր, հավիտյան անմոռանալի այդ թվականը, երբ անձայրածիր Ռուսաստանի վրա, նրա մի եզրից մինչև մյուսը, հեղափոխության դրոշն էր ծածանում, որի տակ հավաքվում էին բոլոր իրավադուրկները, բոլոր աղատասերները: Ահա, շարունակում է հեղինակը, անցնելով պատմվածքի բուն նյութին՝ իր ընտրած քաջարի ժողովրդական հերոսի կյանքի տարեգրությունը. — «այդ գեղեցիկ տարվա մեջ, մայիսյան մի առավոտ, Օսեթիայի մշտադալար հովիտներից մեկում, ժողովվել էր գյուղացիների խուռն ամբոխը՝ լսելու հեղափոխական քարոզչին»:

«Քարակուռ բարձունքի վրա կանգնել է մի կրակոտ երիտասարդ, ձախ ձեռքին բարձր բռնած կարմիր դրոշակը, որի վրա փողփողում էին՝ «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» նշանաբանները: Ապա հեղինակը պատմում է այն մասին, թե ինչ է քարոզում այդ «կրակոտ երիտասարդը» իրեն լսելու եկած «գյուղացիների խուռն ամբոխին»:

«Նա հարստահարված ժողովրդի վրձակն էր նկարագրում և իշխանների արյունարբությունը: Բոցաշունչ խոսքերով ժողովրդի իրավունքներն էր պատգամում և հեղափոխական կոլի նպատակը»:

Իր խոսքի-քարոզի վերջում երիտասարդն ասում է. «...մենք հող և ազատություն ենք պահանջում: Հողը և ազատությունը տերերի և իշխանների ձեռքին են. մենք կովով պիտի տիրանանք մեր իրավունքին՝ արյունով և սրով»:

Ժողովրդին հաղորդելով ուելյուցիոն պայքարի նպատակն ու ծրագիրը՝ երիտասարդ քարոզիչը (=պրոպագանդիստը) դիմում էր իրեն լսող գյուղացիներին և հարցնում. «...Հիմա ձեզնից ով կկամենա կովել և արյուն թափել հողի և ազատության համար: Կամեցողը թող գա, կանգնի այս դրոշակի տակ: Երիտասարդի հարցին ի պատասխան՝ «մի մարդու նման որոտաց ժողովուրդը» —

—Մենք բոլորս կկովենք, մենք բոլորս պատրաստ ենք մեռնելու. ուրիշ է մեզ համար ազատության գրոշակը»:

12. Ռուսական առաջին ռեվոլյուցիայի հենց սկզբին՝ 1905 թվականի հունվարյան «արյունոտ կիրակիից» անմիջապես հետո, նախ Բաքվում և ապա Անդրկովկասի մի շարք այլ վայրերում, տեղի ունեցած հայ-ադրբեյջանական ընդհարումների և հրեական ջարդերի առնչությամբ ցարիզմի չարանենգ դիվային քաղաքականության մերկացումը նույն շրջանի հայ գրականության կարևորագույն էջերից է: Բ հակադրություն ցարիզմի դիվային-դահճային քաղաքականության և ռեակցիոն ազգայնական պարտիաների հակաժողովրդական վերաբերմունքի, ի հակադրություն այն գաղափարային վայնասունի ու «արյան ձայների», որ այդ ընդհարումների առթիվ բարձրացնում էին ազգայնական ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչները, հայ պրոգրեսիվ գրողները ժողովուրդների համերաշխության ու բարեկամության գաղափարն էին պաշտպանում ու քարոզում:

Բոլոր պրոգրեսիվ հայ գրողների (Հ. Թումանյան, Շիրվանզադե, Վ. Փափագյան, Վ. Տերյան, Արփ. Արփիարյան, Շ. Կուրդինյան, Մ. Մանվելյան, Աթ. Խնկոյան և մյուսները) երկերում, հոգվածներում և անձնական նամակներում հայ-ադրբեյջանական ընդհարումները դիտվում են, որպես երկու կողմերի համար էլ համազգային-ժողովրդական աղետ, որով մի պահ խանգարվել էր նրանց բարեկամական հարաբերությունները և մի պահ նրանց ետ պահել ընդհանուր թշնամու դեմ մղվող ազատագրական պայքարից: Մեր ժողովուրդներին հասցված աղետի ծանր վիշտն ու դառնությունն ապրելով՝ հայ առաջադեմ գրողները տեսնում ու մերկացնում էին այն գիշատչին, որի սև ձեռքը կազմակերպել էր ազգամիջյան արյունոտ սպանդը:

Ադրբեյջանական-հայկական ընդհարումների առնչությամբ ցարիզմի ռեակցիոն, ժողովրդասպան քաղաքականության մերկացման և Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ինքնագիտակցության արթնացման գործում էպոխայի նշանակալից մի վավերագիր է՝ պրոլետարիատի հանճարեղ արվեստագետի—Մաքսիմ Գորկու նամակ-հոգվածը՝ «Կովկասի դեպքերի մասին»։ Հայտնի է, որ Գորկու այդ հոգվածը ցենզուրական կրճատումներով միայն՝ տպագրվել էր «Бакы» թերթում, իսկ ավելի լրիվ՝ հրատարակվել էր արտասահմանում, թե՛ պարբերականներում և՛ թե՛ առանձին գրքույկով:

Հայ պարբերական մամուլի մի շարք օրգաններում (Թրիլիսիի «Արշալույս» թերթում, Փարիզի «Անահիտ» ամսագրում, Բոստոնի «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթում և այլն) Գորկու նշանավոր այդ հոգվածը տպագրվեց ոչ թե «Бакы» թերթում տպված տեքստի համաձայն, այլ արտասահմանյան հրատարակություններից այն լրիվ թարգմանվելով:

Ռեվոլյուցիայի մրրկահավն իր հուժկու ձայնով՝ Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ ունեցած բուռն սիրով, ի լուր ամբողջ աշխարհի հայանում էր ճշմարտությունը կովկասյան «արյունոտ կիրակիի» մասին, ցույց տալիս, որ այն կազմակերպել է ժողովուրդների ընդհանուր թշնամին — ցարական կառավարությունը:

«Մենք բոլորս մի թշնամի ունենք,— գրում է Գորկին,— երկրի կառավարողները—ժողովուրդների արյունը ծծող պարագլիտները, որոնք զգում են, որ վերահաս է իրենց հոգեվարքը և մոտ է մահը, ուստի և գազանա-

յին դաժանությամբ նրանք անուամբ են ամեն ինչ, որպեսզի սպանեն ժողովրդի ստեղծագործ ոգին»:

Գորկին համատեղ ու համերաշխ պայքարի էր կոչում Անդրկովկասի և Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին՝ նրանց բնդհանուր թշնամու դեմ, որին կարելի է և պետք է հաղթել ու ոչնչացնել: Այդ նպատակի համար «հարկավոր է միայն»,—գրում էր Գորկին,— որ Կովկասի և Ֆինլանդիայի, Հեհաստանի և Ռուսաստանի բոլոր լավագույն, բոլոր ազնիվ մարդիկ միանան և կազմեն մի ընտանիք, ազնիվների և անվեհերների մի միություն, միանան և հարցնեն միմյանց.

—Ո՛վ է մեր թշնամին:

Պատասխան գտնելը հեշտ է:

...Մենք բոլորս մի թշնամի ունենք: Թող ուրեմն մեր ամենքի միջև լինի հավասարություն և եղբայրություն, թող ամենքին պայծառացնի բանականության լույսը, ձուլվենք և դառնանք մի մեծ, անպարտելի կամք և այն ժամանակ՝ «կեցցե՛ն աղատությունը»:

Հայ պրոգրեսիվ գրողների և հայ առաջագեմ մամուլի գործիչների ելույթներում շողում էր «բանականության լույսը»՝ ցարիզմի նկատմամբ կուտակված ատելության կրակով: Նրանք ևս աղգամիջյան աղետի մեջ տեսնում էին ցարական շեյթանի սև ձեռքը և համերաշխության ու համատեղ պայքարի էին կոչում հայ ժողովրդին՝ ընդդեմ ցարիզմի:

Հանրահայտ է հայ մեծ բանաստեղծ, ժողովուրդների բարեկամության երգիչ Հովհ. Թումանյանի եռանդուն գործունեությունը 1905—1906 թվականներին՝ վերացնելու աղգամիջյան ընդհարումները և կանխելու դրանց կրկնվելը հետագայում: Խաղաղության սպիտակ դրոշակ պարզած և մի հեծյալ խմբի ուղեկցությամբ՝ Թումանյանը շրջում էր Հոռու գյուղերը, հանդիպում հայ և ադրբեջանական բնակչության հետ, համերաշխության կոչելով և հաշտեցնելով նրանց: 1906 թվականի մայիսի 30-ին իր գրած մի նամակում Թումանյանն ասում է, որ իրեն հաջողվել է աղգամիջյան ընդհարումները դադարեցնել բազմաթիվ գյուղերում և վերականգնել դարավոր հարևան ժողովուրդների բարեկամությունը:

«Եվ այսօր ևս այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել և շատ ու շատ անմեղների ազատել այս դադանական կոտորածից» (հ. 5, էջ 298):

Հայ մեծ բանաստեղծի այդ վսեմ զգացմունքով, մեր ժողովուրդների համերաշխության ու բարեկամության նվիրական գաղափարով են համակված լոռեցիներին և ադրբեջանցիներին ու պարսիկ բանվորներին ուղղված նրա հայտնի կոչերը:

Այդ կոչերից մեկում ասված է. «Մենք՝ լոռեցիներս չենք հարձակվում ու չենք կոխում մեր հարևան թուրքերի հետ...»:

Մենք պահպանում ենք խաղաղություն և հաշտություն, դրա համար բարձրացնում ենք սպիտակ դրոշակը և կոչ ենք անում մեր հարևան թուրքերին էլ մեզ հետ միասին պահել խաղաղություն: Եվ երգվում ենք միշտ մաքուր ու բարձր պահել մեր սպիտակ դրոշակը»:

Մյուս կոչ-գիմումի մեջ՝ խոսքն ուղղելով նրանց, «որ կանգնած են սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ» և խորը համակրանք արտահայտելով

նրանց (այսինքն ադրբեջանցի և պարսիկ բանվորների) նկատմամբ՝ թու-
մանյանը զայրույթով է խոսում այն չար ու վնասակար տարրերի մասին,
որոնք շարունակում են ատելություն ու թշնամանք հրահրել հարևան ժո-
ղովուրդների միջև։ Բատապարտելով այդ «անմիտ թշնամությունը», թու-
մանյանն իր համերաշխության կոչը վերջացնում է երեք նշանակալից լո-
զունգներով.

«Կեցցե՛ ազգերի եղբայրությունը.

Կեցցե՛ հալալ աշխատանքը.

Կեցցե՛ բանվոր մարդը»։

Այդ ազնիվ զգացմունքով ու խոհերով համակված՝ մեծ բանաստեղծը
ազգամիջյան ընդհարումների վնասակարությունը նշում էր և այն առու-
մով, որ դրանք խանգարում էին «Ռուսաստանի ազատագրական մեծ կովին»։

Առաջագեմ հայ գրող ու հրապարակախոս Արփիար Արփիարյանը հե-
ռավոր Եգիպտոսից՝ Դահիլեից, դատապարտելով ազգամիջյան արյունոտ
ընդհարումները, ողջունում էր՝ հենց այդ օրերին «Կոչ-դեվեթ» ինտերնացիո-
նալ թերթի հրատարակությունը Բաքվում, որպես ժողովուրդների համերաշ-
խության օրգանի։ Հայերեն ու ադրբեջաներեն լեզուներով «Կոչ-դեվեթ»-ի
հրատարակությունը՝ մանավանդ ազգամիջյան ընդհարումների, ազգայնա-
կան ատելության ու թշնամանքի բոլորոքման օրերին՝ Արփիարյանը հա-
մարում է «կատարելապես նորություն» և «նորանշան երևույթ», որով
կանխանշվում է լավագույն ապագա՝ ինտերնացիոնալ թերթը ներկայաց-
նող երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների հետագա
ամրապնդման ճանապարհին։

Ամենուրեք՝ թե՛ Անդրկովկասում և թե՛ արտասահմանյան այլևայլ
երկրներում հրատարակվող հայ առաջագեմ պարբերականներում ազգա-
միջյան ընդհարումները դիտվում էին իրրև համաժողովրդական ռեզյու-
ցիոն շարժումից սարսափահար եղած դարական կառավարության ռեակցիոն,
մահախուճապ վայրագ քաղաքականության արտահայտություն։

Հեռավոր Բոստոնում հրատարակվող «Առաքս» շաբաթաթերթի 1906
թվականի համարներից մեկում՝ «Նամակներ Ռուսիային (Սև ծովի ափե-
րեն)» հոդվածաշարքում (հեղինակը՝ Լիոն Ժածկանունով) կարդում ենք հե-
տևյալը.

«Հայ-թաթարական ընդհարումների անվան տակ կատարվող կառավար-
չական ոճիրն այնքան անօրինակ է, այնքան սարսափելի իր չափերով...,
որ նույնիսկ այսօրվա Ռուսաստանում, կառավարության ոճրագործու-
թյունն իր նմանը չի ունեցել մարդկային պատմության մեջ, երկար դա-
րերի ընթացքում...»։ Այժմ, շարունակում է հեղինակը «ամենքի համար
պարզ է, որ մինչև հեղափոխությունը չհաղթե, մինչև որ ցարի և նրա ար-
վանդակների ձեռքից չխլվի իրական ուժը, հույս չի կարելի դնել երկրի խա-
ղաղության վրա ընդհանրապես և հայ-թաթարական ընդհարումների վեր-
ջանալուն՝ մասնավորապես»։

Եվ ապա՝ հիշատակելով Ռուսաստանում ցարական կառավարության
կաղմակերպած մյուս կոտորածները—«պոգրոմներն» էլ, և նշելով, որ Պե-
տական Դուման ոչ մի չափով չի կարող կառավարության հրեշավոր գոր-
ծողություններն արգելել, հեղինակն ասում է.

«Ո՞վ չգիտե մինչև այժմ, որ «պոզրոմները» կառավարության գործն է:

... Խլել պալատական հրեշների ձեռքից ուժը, ոչնչացնել այդ սև հիդրան,— ահա միակ միջոցը, և դա կարող է անել միայն և միայն ժողովրդական հեղափոխությունը... ուրիշ միջոց չկա»—(1906 թիվ 39, էջ 309):

Բայց ոչ միայն հայ-ազգրեջանական ընդհարումները, այլև հրեական ջարդերը, լեհերի նկատմամբ եղած դաժանությունները՝ ցարիզմի բարբարոսական էությունը բացահայտող այդ ոճրագործությունները, նույնպես, արձագանք են գտել հայ մամուլում ու գեղարվեստական գրականության մեջ՝ արտահայտելով հայ ժողովրդի ու նրա առաջավոր ինտելիգենցիայի զայրույթն ու ցասումը Ռուսաստանի վայրագ տիրապետության դեմ:

Հրեական ջարդերին վերաբերող գեղարվեստական երկերից ամենանշանավորը Ալեքսանդր Շիրվանզադեի «Ջնուլի ականջը» վերնագրով փախկն է, գրված 1905 թվականի վերջերին (Փարիզում) և տպագրված 1906 թ. հունվարին՝ Թիֆլիսի «Արշալույս» թերթում:

Վիպակի նյութը վերցված է 1905 թ. հեղափոխական շարժումից, ինչպես նշում է հեղինակն իր նամակներից մեկում:

Ռեուլուցիայի վերելքի օրերին գրված և այդ էպոսան մի որոշ կողմից անդրադարձնող այս երկը մի ցայտուն ու ճշմարտացի գեղարվեստական իլյուստրացիա է Հենինի այն մտքի, ըստ որի «ավազակային ցարական ինքնակալության» պայմաններում, հրեաները «տառապում էին ոչ միայն ընդհանուր տնտեսական ու քաղաքական ճնշումից, որ նրանց ճրգմում էր, որպես իրավագուրկ ազգություն, այլ նաև այն ճնշումից, որ նրանց զրկում էր տարրական քաղաքացիական իրավունքներից» (տես Հենին, հ. 8, էջ 635—6):

Շիրվանզադեի երկի բովանդակությունը չի սահմանափակվում հրեաների ողբերգական կյանքի ու ցարական բարբարոսական ուժիմի դեմ հրեա ժողովրդի զայրույթի ու ցասման պատկերումով: Այս երկում հեղինակը մասնակիորեն անդրադարձնում է նաև հերոսական լեհ ժողովրդի ռեուլուցիոն ծառայումը ցարական ուժիմի դեմ: Անձամբ մոտիկից դիտած լինելով Հնաստանն ու լեհ ժողովրդի կյանքը ռեուլուցիայի օրերին, Շիրվանզադեն հարազատորեն, թեև շատ թուուցիկ կերպով, պատկերում է աղատասեր Հնաստանի ընտելությունը, պատմում նրա պատմական ճակատագրի ու հերոսական գիմաղկունության և նրա աղատագրական ընդլիզումների մասին՝ ընդգեմ ցարական բռնակալությանը¹:

13. 1905 թվականի հոկտեմբերյան ընդհանուր քաղաքական գործադուլից և գեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո էլ հայ պարբերական մամուլի քաղմաթիվ օրգաններում ուսական ուղուցիան պարտված չէին համարում՝ հույս հայտնելով, որ ցարական ինքնակալության տապալումը և ժողովրդական ռեուլուցիայի հաղթանակն անխուսափելի է:

Անվանի գրող ու հրապարակախոս Արիիար Արիարյանն իր խմբագրած «Հուսարեր» թերթում (Գահիրե) 1906 թվականի հունվարին գրում էր. «Թող չկարծվի թե ուսական շարժումը ջախջախվեցավ, լմնցավ: Ահեղ

¹ Շիրվանզադե, Երկերի լրակատար ժողովածու, հ. 5, էջ 10—11:

պատերազմ մըն է, որ կը մղվի միահեծանության և ժողովրդական իրավունքին միջև: Հեղափոխությունը կրնա քանի մը ճակատամարտ կորսնցնել, բայց վերջնական հաղթանակը իրեն պիտի մնա երկարատև կովև մը հետո» (Լուսարեր» 1906, թիվ 171. հունվարի 16):

Նույն հեղինակը, մեկ օր հետո գրած իր հոգվածում, նորից այդ միտքն է արտահայտում՝ այս անգամ նշելով նաև ցարական-միապետական ռեժիմի խորտակումից հետո նոր, գեմոկրատական, «նիդակեցական» (այսինքն՝ ֆեդերատիվ) հանրապետության ստեղծման հնարավորությունը Ռուսաստանում:

«... Աշխարհքի բոլոր հեռատես մտքերը ըմբռնած են, թե ուսական հեղափոխությունը, որ 1789-են հետո, Եվրոպայի ընկերական էն ահեղ ցընցումն է՝ ապահովարար պիտի հաղթանակե, և միահեծան կայսրության ավերակներուն վրա, թերևս ոչ թե սահմանադրական միապետությունը, այլ նիդակեցական հանրապետությունը բարձրանա»:

Իսկ այդ հաղթանակի շնորհիվ՝ ավելացնում է հեղինակը վերջում՝ «հայ ժողովուրդը իր արյունին փոխարինություն պիտի ստանա» (Լուսարեր», 1906, թիվ 172. 18/1):

Ահա և Բոստոնի «Արաքս» շաբաթաթերթի ռուսաստանյան թղթակցի կարծիքը Շնամակներ Ռուսիայեն» հոգվածաշարքում: Հեղինակը զայրույթով նկարագրում է ցարական բռնակալության արյունալի խրախճանքը ամբողջ երկրում, բայց այն հույսը հայտնելով, որ կառավարության գործադրած բարբարոսական դաժանությունները նրան չեն փրկի:

«Մի քանի ամիսների անօրինակ գաղանթությունները և Մոսկվայի ապստամբության ճնշումը ցարին և խորհրդակիցներին հույս տվին, թե հեղափոխությունը հաղթված է և կրկին մեծ երկրում տիրում է խաղաղություն և աստծո ողորմություն»: Սակայն պատմությունն, ինչպես ամեն ժամանակ, այս անգամ էլ խաբեց բռնակալին: Նա իր գազանություններով ոչ միայն չնշեց հեղափոխությունն, այլ ահագին քանակությամբ ավելացրեց նրա զինվորների թիվը:

Բանվոր գասակարգը, հեղափոխության այդ նախամարտիկը, որն ամենից շուտ ընդունեց իր ուսերի վրա բռնակալի հարվածները, այսօր կրկին ուժերը ժողոված՝ նետվեց կովի ասպարեզ, իր հետ ունենալով գյուղացուն: ... Հեռու չէ այն օրը, երբ ընդհանուր գործադուլը և գյուղացիների ոտի կանգները կզան վերջին հարվածը տալու ցարիզմին» (Արաքս», 1906, թիվ 40, էջ 314):

Հեղինակը չի հեշտացնում գալիք այդ հաղթանակը: Նա ղգուշացնում է, որ՝ թեև «կառավարության... ամբողջ ուժը նվազել է հեղափոխության դեմ կովելով», բայց «ցարիզմի արմատը շատ խոր է և հեշտությամբ նրան արմատախիլ անել դժվար է»: Ասկայն, չնայած անասելի դժվարության, այնուամենայնիվ, գրում է հեղինակը՝ «... կարելի է ասել, թե ռուս ժողովուրդը և նրա հետ պատմության վնասով կապված ազգեր՝ շատ և շատ քանզ գնով ձեռք կրկրեն իրենց ազատությունը...» (Արաքս», 1906, թիվ 40, էջ 314—5):

14. Ռուսական պրոլետարիատի գլխավորությամբ համաժողովրդական պայքարը ցարիզմի դեմ՝ միաժամանակ մեծապես առաջ է մղում ռուսական պրոգրեսիվ կուլտուրայի ու գրականության բարերար ազդեցությունը

փոքր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդի կուլտուրայի ու գրականության վրա:

Հայ արվեստներն ընդհանրապես և հայ գրականությունը մասնավորապես այս շրջանում ավելի ու ավելի են մոտենում ողուսական արվեստին ու գրականությանը՝ կենտրոնացնելով միջոցներ ստանալով նրանցից և հարստանալով նրանց առաջատար տրագիցիաներով:

Այդ պրոցեսի ամենացայտուն արտահայտություններից մեկը՝ ողուսական կուլտուրայի ու գրականության նկատմամբ ժամանակի հայ գրողների ակտիվ հետաքրքրության աճումն է: — Ավելի ու ավելի են ծավալվում 19-րդ դարի և ներկա դարասկզբի ողուս գրողներից կատարվող թարգմանությունները և նրանց կյանքի ու ստեղծագործության գնահատումները հայ պարբերական մամուլում: Եվ այդ ոչ միայն արևելահայ, այլև արևմրտահայ հատվածներում:

19-րդ դարի կլասիկներից Պուշկին, Գրիբոեդով, Գոգոլ, Լեմոնտով, Նեկրասով, Ալյուշկով-Շեգերին, Ի. Տուրգենև, Լև Տոլստոյ, Դոստոևսկի, Մամին-Միլերյակ, Ա. Կոլցով, Չեխով, ժամանակակիցներից Մաքսիմ Գորկի, Ա. Սերաֆիմովիչ, Վերեսաև, Վլ. Կորոլենկո, — ահա բոլոր այս և մի շարք այլ գրողներից կատարվում են հայերեն թարգմանություններ ու գրվում են նրանց մասին բնութագրական հոդվածներ:

Ռուս-հայ գրական-կուլտուրական կապերի զարգացման այս շրջանի առավել կարևոր փաստը այն է, որ 1899—1900 թվականներից սկսած տարեց տարի աճող հետաքրքրության առարկա է դառնում պրոլետարիատի մեծ արվեստագետ Մաքսիմ Գորկու կյանքն ու ստեղծագործությունը: Նրա երկերից կատարվում են բազմաթիվ թարգմանություններ և նրա կյանքի ու ստեղծագործության մասին գրվում են հոդվածներ տասնյակ պարբերականներում, թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան հատվածներում:

Ռեուլուցիայի նախօրեին և առավել չափով 1905—1907 թվականներին Մ. Գորկու անունով նշանավորվող ողուս ռեուլուցիոն գրականությունը խորը ազդեցություն է թողնում հայ պատանեկության ու երիտասարդության մտքի վրա: Ռեուլուցիոն խանդավառությամբ համակված այդ երիտասարդության ներկայացուցիչները, դեռ աշակերտական նստարաններից սկսած, կապվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ և ակտիվորեն մասնակցում նրանց գրական-պրոպագանդիստական գործունեությանը:

Վերջերս մամուլում հրատարակված իր հուշերում անվանի գրականագետ, հին բուլղարիկ Արտաշես Կարինյանը գրում է Բաքվի դպրոցական պատանեկության մասին՝ անդրադառնալով մասնավորապես Մ. Գորկու ազդեցությանն ու հմայքին:

«Մեծագույն համարում ուներ այդ օրերին Մաքսիմ Գորկին, Գորկու «Բազեի երգը», ապա «Մրրկահավի երգը» ռեուլուցիոն պատանիները անգիր էին արել: Ապա նշում է, որ «անլեզալ հրատարակություններ՝ 1905 թ. ապրիլին տպագրվել էր հայերեն մի բրոշյուր — ակնարկ՝ նվիրված Մաքսիմ Գորկու հայտնի «Ամառանոցավորներ» պիեսի բնութագրմանը»¹:

¹ «Կոմունիստ» (Բաքվի), 1955 թ. 26/4 № 98. Արտ. Կարինյան — «Բաքվի դպրոցականները 1905 թվականին»:

Բաքվի կլասիկական գիմնազիայում շատ ակտիվ գործող աշակերտական կազմակերպությունը 1905—1906 թթ. ուներ իր խմորատիպ հրատարակությունները, որոնցից առավել հետաքրքրականը և ուշագրավը Բրուտ ծածկանունով հեղինակի «Գրականություն և կյանք» վերնագրով գրքույկն է (1905)։ Իսկ այդ ծածկանունով հանդես է եկել, այն ժամանակ Բաքվի ռեալական դպրոցի աշակերտ, հետագայում անվանի բոլշևիկ, մարքսիստ գրականագետ ու հրապարակախոս Արտաշես Կարինյանը։ Այդ տարիներին Կարինյանը նույն Բրուտ և այլ ծածկանուններով աշխատակցում էր նաև բոլշևիկյան մամուլին («Կայծ» և այլն)։ Վերոհիշյալ գրքույկը գրելիս Կարինյանը դեռ 19 տարեկան պատանի էր և Բաքվի ռեալական դպրոցի աշակերտական կազմակերպության ակտիվ անդամներից մեկը։

Բրուտ—Կարինյանն իր «Գրականություն և կյանք» գրքույկով՝ ժամանակի հայ առաջավոր պատանեկության ու երիտասարդության ռեուլյուցիոն-քաղաքական տրամադրությունների ամենացայտուն արտահայտիչներից է։ Նրա գրքույկը վկայում է այն մասին, որ երիտասարդության գրական-գեղագիտական ըմբռնումները ձևավորվում էին ռեուլյուցիոն-մարքսիստական ուղղությամբ և որ սոցիալ-դեմոկրատիայի բարերար ազդեցությամբ գրականության ու կյանքի փոխհարաբերությունը, հասարակական կյանքում գրականության, որպես իդեոլոգիական գործոնի նշանակությունը դիտվում էին տիրող կարգերի դեմ մղվող ռեուլյուցիոն պայքարի հայեցակետից։

Հետաքրքրական և ուշագրավ է մանավանդ այն, որ գրքույկում գրականության և հասարակական կյանքի կապի ու փոխհարաբերության հարցերը քննարկելիս հեղինակի խորհրդածությունները կապակցվում են առավելապես Մ. Գորկու «Ամառանոցավորներ» («Дачники») պիեսի գաղափարական բովանդակության հետ։

Ռեուլյուցիայի տարիներին Գորկու երկերից կատարված բազմաթիվ թարգմանությունների (որ կատարել են Ավ. Իսահակյանը, Հովհ. Թումանյանը, Համադասպ Համբարձումյանը և շատ ուրիշները), նրա կյանքի ու ստեղծագործությանը վերաբերող հոգվածներից բացի, հայկական մամուլի այլևայլ օրգաններում պարբերաբար ապագրվել են նաև Գորկու գրական ու ռեուլյուցիոն քաղաքական գործունեության մասին բազմաթիվ հաղորդումներ ու լուրեր, որոնց հիման վրա, մինչև իսկ կարելի է կազմել նրա ամբողջական կենսագրության ուրվագիծը։

Գորկու մասին լուրերի ու տեղեկությունների կարելի է հանդիպել մի քանի տասնյակ հայ պարբերականների էջերում, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածներում, ըստ որում ամենատարբեր հասարակական հոսանքների օրգաններում։ Ահա, օրինակ, բոլշևիկյան «Կայծ» թերթի 1906 թ. № 38-ում տպագրված է հետևյալ լուրը («Ռուսաստանի կյանք» բաժնում)։

— «Սեպտեմբերի սկզբներին Անատոլ Ֆրանսը և Մառսիմ Գորկին Պարիզում կսկսեն հրատարակել հեղափոխական շարժմանը նվիրված մի օրաթերթ»։

Դեմոկրատական «Աշխատանք» շաբաթաթերթը 1906 թ. մարտին հաղորդում է Բեռլինում Գորկու ունեցած հրապարակային մի ելույթի մա-

սին՝ համառոտ չարագրելով նրա մտքերը, որոնք ուղղված են ցարական կառավարության «բռնի գործողություններին» դեմ:

Ճեռու հայտնի գրող Մաքսիմ Գորկին, որ այժմ Բեռլինում է, ի պատիվ նրա կազմված մի բազմամարդ ժողովի մեջ՝ ճառ է արտասանել, ուր ի միջի այլոց ասել է հետևյալը.

«Իշխանության բռնի գործողությունները իմ հայրենիքի թշվառության ամենագլխավոր պրոյուրն է: Բայց իմ ժողովուրդը ոտքի է կանգնել, որպեսզի իր ուսերից ցած գցի այդ ծանր լուծը: Ժողովուրդը կհաղթե և այն ժամանակ միայն կստեղծվի նոր գեղարվեստ, ուրախ և հպարտ մի գեղարվեստ»:

«Արշալույս» թերթը տպագրում է Գորկու բողոքի նամակը ռեակցիոն սեհարյուրակային «Говое время» թերթում հրատարակված ստահոգ մի թղթակցության առթիվ:

Տպագրելով սուվորինյան օրգանի պրովակացիոն «լուրը» մերկացնող այս նամակը՝ «Արշալույս»-ի խմբագրությունը ոչ միայն իր խոր համակրանքն է արտահայտում ողու մեծ գրողի, Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների եռանդուն պաշտպանի նկատմամբ, այլև արտահայտում է հայ պրոգրեսիվ հասարակայնության ատելությունը՝ ցարական ռեակցիայի վայրահաջ բերանը հանդիսացող մի օրգանի նկատմամբ, որի սե էջերից անթիվ հարձակումներ էին լինում նաև հայերի դեմ, հակահայկական պրովոկացիոն հարձակումներ, որոնք հակահարված են ստացել ու մերկացվել հայ պրոգրեսիվ մամուլում:

Գորկուն վերաբերող լուրերում կան այնպիսիները, որոնք տեղեկացնում են՝ բուլղերիկյան պարտիական մամուլի հետ մեծ գրողի ունեցած սերտ կապի մասին: Ահա, օրինակ, «Արշալույս» թերթի 1905 թ. նոյեմբերի 2-ի համարում հաղորդված է հետևյալը.

«Լույս է տեսել «Новая жизнь» անունով թերթի առաջին համարը², թերթի ղեկավարն է Մաքսիմ Գորկին: Իր հավելված՝ առաջին համարին կից կա «ոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագիրը, որ հաստատվել է կուսակցության երկրորդ համագումարում:

Վերջին բոպեին մեզ հասած լուրերը հաստատում են, որ նոր թերթի առաջին համարը կառավարության կողմից գրավված է և բռնված»:

1905—1907 թվականներին հայկական մամուլում Գորկու ռեպուցիոն-քաղաքական գործունեության արձագանքներից առանձնապես ուշագրավ է այն, ինչ որ վերաբերում է 1906 թվականին Գորկու կատարած ամերիկյան ուղևորությանը և այնտեղ նրա ունեցած ելույթներին:

Հայտնի է, որ Գորկու ամերիկյան այդ ուղևորությունը սերտորեն կապված էր բուլղերիկների պարտիայի այն ժամանակվա պայքարի խնդիրների հետ: Մոսկվայի ղեկավարության գինված ապստամբության պարտությունից հետո պարտիայի ղեկավար շրջանում միտք է ծագում, լենինի

¹ «Աշխատանք», 1906 թ. ժարտ, № 10, «Մամուլի շուրջը»:

² «Новая жизнь»-ը բուլղերիկյան առաջին լեզալ թերթն էր, որի առաջին №-ը լույս է տեսել 1905 թ. հոկտեմբերի 27-ին (նոյ. 9) և հրատարակվել է մինչև նույն տարվա դեկտ. 3-ը (16-ը) Պետերբուրգում Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ և Մ. Գորկու ամենաակտիվ աշխատակցությամբ:

³ «Արշալույս», 1905 թ. 2/11, № 45, «Ներքին լուրեր»:

հավանություններ, հանձնարարել Գորկուն՝ ուղեորվելու Ամերիկա՝ հոգուտ ռուսական ռեվոլյուցիայի գործի ազդեցության միջոցով՝ փող հավաքելու պարտիայի գանձարկղի համար¹, միաժամանակ ազդեցության մղելու, որպեսզի Արևմուտքի պրոգրեսիվ հասարակական կարծիքի ճնշման տակ, որևէ փոխադրություն չտրվի ցարական կառավարությանը:

Ահա այդ ուղեորության վերաբերյալ հետաքրքրական նյութեր են ապագրվել Բոստոնի հայկական երկու պարբերականներում՝ «Արաքս» և «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթերում:

Այդ պարբերականներն խմբագրություններին հայտնի է եղել Գորկու ամերիկյան ուղեորության ռեվոլյուցիոն-քաղաքական նպատակը, որին նրանք վերաբերվում են խորին համակրանքով:

«Արաքս»-ի 1906 թ. ապրիլի 21-ի համարում հաղորդված է հետևյալը. «Ռուս հայտնի վիպասան և հեղափոխական ղեկավար Մաքսիմ Կորբի անցյալ շաբթու Նյու-Յորք հասավ: Նա Ամերիկա կուգար որոշ առաքելության մը՝ հանուն ռուսական հեղափոխության»:

Ուշագրավ է այն, ինչ ասված է Գորկու ընդունելության մասին. «Խանդավառ ընդունելություն մ'ըրին իրեն Նյու-Յորքի մեջ. բոլոր թերթերն սկսան անով զբաղվել, և վստահաբար Կորբին իր հայրենիքին մեծ ծառայություն մը մատուցելու հաջողություն ունենա»:

Այնուհետև հաղորդման մեջ նշված է, որ մի քանի օր հետո Ամերիկայի ռեակցիոն շրջանները Գորկու մասին սկսեցին վարկաբեկիչ լուրեր տարածել՝ նրա առաքելությունը «վտանգելու» գիտալուրություններ, ըստ որում՝ ասված է «Քրոնիկ»-ում՝ «Ռուս կառավարության լրտեսները քիչ զեր չխաղացին Կորբի առաքելությունը վտանգելու»²: Այդ հաղորդումից հետո՝ «Արաքս»-ի հունիսյան համարներում հանդիպում ենք «Մաքսիմ Կորբի Պոստոնի մեջ» ընդարձակ հաղորդմանը:

Այս վերնագրի տակ տպագրված է Գորկու՝ Բոստոնում կարգացած հրապարակային «Բանախոսությունը», որը նվիրված է եղել Ռուսաստանի ներքին քաղաքական վիճակին և ռեվոլյուցիայի հեռանկարներին: Տպագրելով Գորկու «Բանախոսություն» մասին հաղորդում, «Արաքս»-ի խմբագրությունը, անշուշտ նպատակ է ունեցել հայ ընթերցողներին ծանոթացնելու, թե «Ռուս հայտնի վիպասանի ու հեղափոխական ղեկավարի» հասարակական-քաղաքական դիրքին և թե, միաժամանակ՝ նրա միջոցով Ռուսաստանի քաղաքական դրությանը, ցարիզմի դեմ ռուս ժողովրդի մղած ռեվոլյուցիոն պայքարի ընթացքին:

Մեր օրերի հայ (ըստ երևույթին ոչ միայն հայ) ընթերցողների համար Գորկու այդ «Բանախոսությունը» միանգամայն անձանոթ է, որովհետև չի տպագրված հեղինակի որևէ ժողովածվում, ուստի և տեղին է գոնե քաղվածաբար այն մեջ բերել այստեղ՝ նշելով նաև «Արաքս» պարբերականի պատմական ծառայությունը, որ ռուս մեծ գրողի ու ռեվոլյուցիոնների քաղաքական կենսագրության այդ կարևորագույն էջերից մեկը անգրագարձել է հայ պարբերական մամուլում:

Հիշյալ վերնագրի տակ («Մաքսիմ Կորկի Պոստոնի մեջ») նախ նշված

¹Տե՛ս *Илья Грыздов, Горький*, 1946, էջ 77.

² «Արաքս», 1906, 21/4, թիվ 25, էջ 197—8. «Քրոնիկ»:

է Գորկու կարգացած բանախոսութեան օրն ու վայրը, ուր նա հանդես է եկել, ինչպէս և այն վերաբերմունքը, որ ցուցադրել է ողու մեծ գրողի նկատմամբ ճամբրիկյան հասարակութեանը և անոր ճառաջնորդ մամուլը:

Ռուս կառավարութեան գաղտնի մեքենայութեանց շնորհիւ, — գրում է թերթը — «նույնիսկ Նյու-Յորքի պանդոկներէն մերժված՝ ողու հանճարեղ վիպասանը՝ Գորկին, անցյալ չորեքշաբթի երեկո ամսույս (իմա մայիսի — Ա. Ա.) 30-ին բանախոսութեան մը կարգաց Բոստոնի Grand Opera Hous-ի մեջ»։ «Ամերիկյան հասարակութեանը և անոր ճառաջնորդ մամուլը՝ Գորկիի նոր աշխարհ գալը անբնական ազմուկով ու արքայաւայել ցույցերով տոնելի հետո՝ հանկարծ... տարօրինակ թշնամական դիրք բռնած էր դեպի մեծանուն հեղինակը...»:

Այնուհետեւ ասված է, որ հակառակ ճամբրիկյան մամուլին մեծամասնութեան» տարածած չարանենդ ու վարկարկելի լուրերին և ճանտեղի հարձակումներին» Գորկու դեմ թի պաշտպանութեան» «հասարակական բարոյականութեան», այնուամենայնիւ անհնար է եղել Գորկուն մեկուսացնել Ամերիկայի պրոգրեսիւ հասարակութեանից:

«Գորկիները մենակ չեն կարող մնալ» — ասված է հաղորդման մեջ. — «Թեև իրեն ճառաքին» համարող ճամբրիկացին մերժեց անոր իր համակրութեանը», բայց «երեւարձակ Ռուսիո լազմացեղ ու լազմալեզու ազգերու ամերիկյան ցերեպայացուցիչները — զաղրական հրեան, լեհացի, ֆինլանտացի, լիտվացի, ռուսը, հայը պիտի բանային իր առջև իրենց սիրտն ու հոգին: Այդ տարրերն են ահա, հավատարապէս տառապող ոմրագործ միապետութեան լուծին տակ, որոնք գիտեն ու կհասկանան Գորկիի առաքելութեան բոլոր վեմութիւնը և այն կապը, որ կմիացնէ ցերեպայացու ազատագրութեան պատմական շրջանը Գորկիի ու իր դասակարգին պատկանող անհատներու հետ»։ Ահա ճայդ իսկ պատճառով և, — ավելացնում է հեղինակը, — հասկանալի էր Գորկու «բանախոսութեանը ներկա հասարակութեան», չնչին բացառութեամբ՝ այդ ազգերին պատկանելու հանգամանքը:

Այնուհետեւ, նախքան Գորկու «բանախոսութեան» անցնելը, հեղինակը ցերեպայացու համակրանքի պաշտպանութեամբ նկարագրում է մեծ գրողին՝ ուղադրութեան առնելով ամենից առաջ նրա արտաքին պարզութեանն ու հմայքը:

«Հասարակ, մութ գույնի գործավորական շապիկով (բուպաշկա), վրային նեղ, կովկասյան գոտիով մեջքը կապած, բարձրահասակ, նիհար ու մասամբ կորաքամակ՝ Գորկին կթողու սովորական պարզ, ողու գործավորի մը տպավորութեան: Առանց ծանոթ ըլլալու իր կենսագրութեան, դուրին է գուշակել, որ քիչ տառապանքներ տեսած չէ իր չարքաշ, թշվառ անցյալի մեջ...»:

Հեղինակը բնութագրողին տեղեկացնում է նաեւ այն մասին, որ Գորկին իր «բանախոսութեան» կարգացել է «իր մայրենի լեզվով» և հետտորակա՝ ձիւրք չունենալով մեր... շրջուն ճարտասաններուն նման, կգրէ իր բնական և ապա կկարդա այն իր ունկնդիրներուն առաջ»:

Իսկ ինչի՞ մասին է խոսել նա, ինչն է եղել նրա թեման, որ այնքան մեծ հետաքրքրութեան է առաջացրել մանավանդ «Ռուսիո լազմացեղ ու լազմալեզու ազգերու ամերիկյան ներկայացուցիչներին», այդ թվում և հայերի միջավայրում: «Ձաքը, Գուման և ժողովուրդը — ահա բանախոսութեան նյութը» — գրում է հեղինակը և ապա հաղորդում այն անջնջելի

խորը, հմայիչ տպավորությունը, որ թողել է ռուս հանճարեղ վիպասանի՝ ու ռեվոլյուցիոնների խոսքը Բոստոնի բաղամաղգ ու բաղմալեզու ունկնդիրների վրա:

Գորկիի բանաստեղծությունը, գրում է հեղինակը, — սրամիա է, պարզ և չափազանց գեղեցիկ: Նա գիտե քանի մը հաջող բառերով կատարելապես իրեն հպատակեցնել բաղմուռյանը, քանի մը փաստերով, օրվան գեպերու ճոստիկանական ղեկուցումներով՝ միանգամայն իր ուզած կերպով տրամադրելու իր ունկնդիրները¹:

Ահա այս նախարանից հետո, տրված է Գորկու բանաստեղծյան ընդարձակ շարադրանքը (ավելի քան 5 մեքենագիր էջ ծավալով, որը տպագրվել է «Արաքս» շաբաթաթերթի երկու համարներում (2. VI և 16. VI թիվ 31, 33):

Գորկու այդ ելույթի տպագրումը «Արաքս»-ում ռուս հանճարեղ գրողի ու ռեվոլյուցիոնների գործունեության հայկական արձագանքների ամենափայլուն էջերից է: Հայ պրոգրեսիվ պարբերականի խմբագրությունն անվերապահորեն ու խորին համակրանքով է նրան տեղ տվել, ունենալով այն ազնիվ ձգտումը, որ Գորկու մարտական կոչերն ու ռեվոլյուցիոն գաղափարները ակտիվ արձագանք կգտնեն նաև բոլոր ազնիվ ու ազատասեր հայ մարդկանց սրտերում:

Հարկ է նկատի ունենալ որ, ինչպես ողիս կլասիկների (Պուշկինից ու Լերմոնտովից սկսած մինչև Լ. Տոլստոյն ու Ա. Չեխովը) նույնպես և ռեվոլյուցիայի մեծ արվեստագետի՝ Մաքսիմ Գորկու երկերի թարգմանություններն ու նրա գործունեությանը վերաբերող գրվատական-ընտելագրական հոգվածներին և հաղորդումներին հանդիպում ենք հայ պարբերական մամուլի ամենատարբեր հոսանքների պատկանող օրգաններում (Արևելյան հատվածում «Մշակ», «Նոր Դար», «Արշալույս» թերթերը, «Մուրճ», «Լուսա» մամագրերը և այլն):

Արևմտյան հատվածում մենք Գորկու երկերին ու նրան վերաբերող հոգվածներին կամ լուրերին հանդիպում ենք, թե այն օրգաններում, որոնք ռուսական ռեվոլյուցիայի նկատմամբ արմատական ռեվոլյուցիոն դեմոկրատական դիրքում էին կանգնած (Բոստոնի «Արաքս» և «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթերը) և թե այն օրգաններում, որոնք նախնալուրիներալիզմի արտահայտիչներն էին («Անահիտ» աժսագիրը Փարիզում, «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը Ջոյուտոնայում, «Արծի» երկշաբաթաթերթը Բոստոնում, «Ազգակ» շաբաթաթերթը և «Մանգուլների Էֆրիար» օրաթերթը Կ. Պոլսում և այլն):

Իսկ հարկ է նշել, որ անկախ այդ պարբերականների հասարակական դադափարական ուղղության պրոգրեսիվության աստիճանից՝ նրանք, անկասկած, օրեյկտիվորեն դրական շատ մեծ դեր են կատարել ռուսական գրականության, ըստ որում և Մ. Գորկու ստեղծագործության ժողովրդականացման բնագավառում՝ պրոլետարիատի մեծ արվեստագետի արտահայտած ռեվոլյուցիոն հումանիստական գաղափարների տիրական ազդեցությունը տարածելով հայ ժողովրդի աշխարհասիրուհ հատվածների միջավայրում:

¹ «Արաքս», 1906, թիվ 31, էջ 246: